



Զ. Դարձմն

ԻՄ ԱՌԱՎՈՏԸ

ՀԱՅՊԵՏՏՐՈՎԱԾ

891.99-93 | 15.318

7-27 | Դարյան, Զ.

ԽՄ առավելություն

2n

| | | |
|-------|------|-----|
| | M(2) | 794 |
| 41/11 | | 502 |

891.99-93

Դ-27

Զ. ԴԱՐՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ Հ 1961 թ.

ԿՐ ԱՌԱՎՈՏԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

15.318
A 30.503



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԵՐԱՎԱՆ

1949

Շապիկը՝ նկարիչ Գ. ԽԱՆՁՅԱՆԻ

Յ. Դարյան

Мое утро

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1949



ԻՄ ԱՌԱՎՈՏԸ

Ուզնում եք իմանալ, թե ինչողես է սկսվում իմ առավոտը: Ես ձեզ կպատճեմ: Ես ինքս էլ հենց մտածում էի մի օր մեր օղակի հավաքույթում խոսել ալդ մասին: Ու կխոսեմ: Ամառը ճամբար եմ գնալու և խարույկի շուրջը մերոնց պատմելու եմ: Նրանք էլ իրենցն են պատմելու: Բայց մինչև ամառը դեռ քանի ամիս կահսկ ես չեմ կարող ալդքան համբերել: Ահա սկսում եմ:

Մեր տանն առաջինը դարթնում է մայրիկը՝ հայրիկից էլ շուտու: Ես նրան քնած երբեք չեմ տեսել ու մի ժամանակ կարծում էի, թե նա չի էլ քնում: Երեկոներն էլ նստում է մինչև ուշ զիշեր ու իր աշակերտների տետրակներն է ուղղում, կամ հայրիկի համար թաշկինակներ է կորում: Ասենք, դուք մայրիկին կճանաչեք, ուսուցչուհի է, շքանշան ստացավ ու նկարն էլ թերթում տպվեց՝ ակնոցն աչքերին: Եթե նա իմ մայրիկը չլիներ, այնքան լավ բաներ կասեի նրա մասին: Վախենում եմ, մտածեք՝ պարծենում է, թե չէ կասեի, որ նու ամենալավ ուսուցչուհին է ու նրանց դուռըն:

ամենալավ պարոցը։ Իսկ որ իմանաք՝ ինչքան լավ աշա-
կերտահիներ ունի մայրիկը։—Ես նրանց ճանաչում եմ
տետրակներից։ Մայրիկից թաքուն նայում եմ ու նա-
խանձու դալիս է, այնպես լավ, այնպես մաքուր են
զրում։ Նրանց անուններն էլ գիտեմ՝ Կիմա, Գոհար, Սա-
թիկ, Վարդուշ Նազարյան և Վարդուշ Բարսեղյան ու
էլի շատեր։ Նրանց մասին մայրիկն ասում է՝ իմ Կի-
ման, իմ Գոհարը, ինչպես որ կասի՝ իմ Սուրիկը։

Սուրիկը դե ես եմ, իո գիտեք։ Ես եմ, որ առաջինն
իմանում եմ մայրիկի զարթնելը, ազնիվ խոսք։ Ինչքան
էլ նա իր ննջարանից զգուշությամբ, ոտքի ծայրերի
վրա դուրս գա ու անցնի մեր սենյակով, դնա խոհանոց,
էլի ես կիմանամ, թեկուզ ամենալավ երազում լինեմ։
Թամարն էլ ասում է, թե ինքը համարյա մայրիկի հետ
է զարթնում, լվացվում ու սկսում նրան օդնել՝ անկո-
ղինն է հավաքում, թեյնիկն է ջուր լցնում, խոհանոցն
է կարդի բերում։ Թո՛ղ ասի, իր բանն է, բայց որ մայ-
րիկին առաջինը ես եմ տեսնում իմ դլխավերեր կանդ-
նած, գլուխո շոյելիս, — այդ արդեն ինքը՝ թամարն էլ
գիտե ու տեսնում է։ Գիտեք չե՞՞, որ թամարն իմ քույ-
րիկն է, երկու տարի ու մի ամսով ինձնից մեծ։ Մի
մեծ ալբոմ ունի, հալրիկն է նվիրել, միջին աշխարհի
բոլոր նշանավոր մարդկանց նկարները։ Իրենց ջոկխոր-
հըրդի նախաղանն է ու մի քիչ էլ իրեն երկակայում է։
«Մայրիկ, — ասում է, — այսօր ժամը վեցին ջոկխորհըրդի
նիստ ունեմ»։ Կամ թե՝ «Ուշանում եմ, մայրիկ, ախը
այսօր միշուրինցան տնկիներ ենք տնկելու»։ Նրանց
դպրոցում վաղուց պատրաստվում են պաղատու ծառերի
միշուրինցան տեսակներ տնկելու։ Նա արդեն տնկել է
չգիտեմ տան, թե տասնհինգ հատ։ Մի տետրակ ունի,
ամեն ինչ գրում է մեջը, որ տունկը երբ է տնկել, օր-
գա ո՛ր ժամին, տունկի չափու ու էլի էսպես բաներ։

Հորեղբայր Վարդանից շատ բան է սովորել: Հորեղբայր
Վարդանը գլուղատնուն է ու անեն անդամ մեղ մոտ
դալիս՝ մի գլուխ Միջուրինից է խոսում: Թամարն էլ հո՞
ի՞նչ հարց ասես, որ չի տալիս նրան: Մի զազանիք
ասեմ՝ կպահե՞ք. — առաջ ես կարծում էի, թե Միջուրինը
հորեղբայր Վարդանենց կողմողի նախագահն է: Լավ էր,
որ շուտ գլխի ընկա ու թամարը չի մացավ: Թե չէ՝ ծի-
ծաղելու էր, հա՞... Իսկ հիմա զիտեմ՝ ո՞նց որ պատիս:
Ասենք՝ Միջուրինը հենց պապիս էլ նման է, զիտե՞ք:
Ափսոս, պապս անցյալ տարի մեռավ, երբ ես Միջուրի-
նին դեռ չէի ճանաչում, թե չէ կհարցնեի՝

— Պապի, Միջուրին պապը հո քո եղբայրը չէ՞...

Կինոյում էլ եմ տեսել: Քեզս բերեց, որ կանգնում
է ու ամերիկացիներին ասում. — Ես ձեր երկիրը չեմ գա,
թե կուզ աշխարհն ինձ տաք: Ես իմ հայրենիքն ունեմ
ու իմ հայրենիքը կծաղկեցնեմ... — Ես էլ այդպես կասեի,
ազնիվ խոսք: Իսկ թամարն ասում է, թե՝ չէիր ասի. դե-
նա սիրում է ինձ հակածառել, ու մեկ-մեկ ձեռքերս քոր
են գալիս: Բայց չէ՛, ես թամարին սիրում եմ, հայրիկն ու
մայրիկն էլ են սիրում: Ինձ նման նա էլ զրավորից միշտ
հինգ է ստանում ու էնքան բարդ բառեր զիտի՛: Շատ է
կարդում ու գրում: Բայց մի բան ասեմ՝ հո թամարին
չե՞ք ասի, կնեղանա: Անցյալ տարի ճամբարից մայրի-
կին գրած նամակում «խարույկ» բառի մեջ «յ» տառը
կուլ էր տվել: Դուքս էր եկել խարուկ: — Մեր ուրախ
խարուկը վառվում է մինչև ուշ երեկո.... Ծիծաղելի բան:
Զգիտեմ՝ մայրիկը թամարին զգուշացրե՞լ էր դրա համար,
թե՝ չէ, բայց երբ ճամբարից վերաբարձավ, ես նրան
տապի.

— Թամար, ձեր ուրախ խարուկը դեռ վառվառմէ..

Նա խեթ նայից ինձ, կարմրեց ու քիչ էր մնում
բարկությունից լաց լինի: Մայրիկն էլ հոնքերը կիտեց

վրաս ու ես զղջացի իմ արածը: Ա՛յ, թե ինչպիսի քույրիկ ունեմ: Առավոտ շուտ սկսում է կամ դասերը սերտել և կամ ոտանավոր անգիր անել: Էնքա՞ն անգիր զիտի, էնքա՞ն անգիր դիտի ու այնպես էլ լա՞վ է արտասանում: Ասում է՝ դերասանուհի եմ դառնալու: Օ՛, ի՞նչ լավ է դերասանուհի քույր ունենալ, չէ՞: Ես ինչքան եմ նախանձել Վաղգենին, որի քույրը թատրոնում Ուլյանա Գրոմովայի դերն է խաղում: Իսկ իմ քույրիկը, արտիստուհի՝ Թամար Ասմարյանը (աֆիշներում այսպես էլ դրելու են) Զոյայի դերը կխաղա, այս, կտեսնեք: Ես միշտ երազում եմ այդ օրը... Ահա բեմ է մտնում սիրելի Զոյան, իմ քույրիկը: Բոլորը ծափահարում են նրան, իսկ ես ուրախությունից հաղիվ չեմ ճշում: Հետո չգիտեմ ինչու՝ հիշում եմ «խարուկը» ու մաքումս ասում եմ՝ ների՛ր, քույրիկ չան...

Բայց ախը ես սոռացել եմ պատմել, թե ինչպես է սկսվում իմ առավոտը. չե՞ք էլ դդուշացնում:

Գուցե դուք կարծում եք՝ մայրիկը կամ Թամարն են ինձ զարթեցնում: Չէ՛ մի, Ես թույլ էլ չեմ տա: Հովահանիկը չե՞մ: Տասնմեկս վաղուց անցել է: Ես սիրում եմ ինքս զարթնել ու ուղիոն միացնել: Միացնում եմ թե չէ՝ «Բարի լույս ձեղ, երեխանե՛ր, սկսում ենք մեր պիոներական լուսաբացը»... Այնքան նոր ու լավ բաներ եմ իմանում որ: Շատ, շատ. ու ես միշտ էն եմ մտածում, թե Վահանիկը ի՞նչպես է անում առանց «Լուսաբացը» լսելու: Ես չէի կարող, ազնիվ խոսք: Վահանիկն էլ եղբայրս է, իմ կեսի չափ հաղիվ լինի ու մանկապարտեղ է գնում: Ես եմ նրան ուղեկցում մինչև իրենց մանկապարտեղը: Շատախոսն է, հա: Հենց որ փողոց ենք դուքս դալիս՝ սկսում է.—Սուրիկ, էս մարդն ով է, Սուրիկ, էն քեռին ուը է գնում, Սուրիկ, բա ես ե՞րբ եմ դպրոց գնալու, ու էսպես մինչև տեղ ենք հասնում: Ես

էլ դե ՚ի բան ասում եմ, հո չեմ կարող լոել։ Ամեն
առավոտ մեր փողոցի աջ անկյունում մի քեռի է հանդի-
պում, որ մեզ նայելով ժպտում է ու անցնում։ Այնպի-
սի մեծ և ուժեղ ձեռքեր ունի, որ հենց առաջին օրվանից
ինձ թվաց, թե Ստախանովի է։ Այդպես էլ ես բացա-
տրեցի Վահանիկին՝ այ, Ստախանով քեռին, Վահանիկ
ջան, նայի՞ր... Մի քիչ անց մեզ հանդիպում է ակնոցա-
վոր մի կին՝ մայրիկին այնպես նման։ «Բարի լույս
երեխաներ», — ասում է նա ու Վահանիկի գլուխը շոյելով
անցնում։ Հետո դպրոց դնացող երեխաների խմբեր են
գտնիս, հետո էլի քեռիներ ու մայրիկներ ու բոլորն էլ
կարծես ծանոթ լինեն... էնպես լա՛վ է։

Երբ ես վերադառնում եմ, հայրիկն արդեն դնա-
ցած է լինում։ Դուք երեխ նրան էլ չեք ճանաչում, թեև
ամբողջ քաղաքը դիտի՝ վարպետ Գեղամ Արտեմիչ։ Մեր
գործարանում բոլորն էլ նրան այլպես են ասում, իսկ
մայրիկն ուղղակի ասում է՝ Գեղամ։ Նրա նման վարպետ
քիչ կա, ազնիվ խոսք։ Կարծում եք՝ ալարծենում եմ,
թերթելում ինչքա՞ն են զրում նրա մասին։ Բոլոր էդ
գրածները Թամարը հավաքել է իր ալբոմում։ Հայրիկն
իր հնդամյակը վաղուց է կատարել։ Երկու երեք տարվա
ճամփան նա մի տարում կարում-անցնում է, բա՛։

Ալեքսանդր Զուտկիխի մասին հո լսել եք, մոսկվացի
ենթավարպետ է ու նկարն էլ հայրիկիս գլխավերենում
փակցված, թերթից է պոկել։ Վահանիկին ասել եմ, որ
նա մեր քեռին է ու Մոսկվայումն է ապրում, շուտով
մեզ հլուր է գալու։ Վահանիկն էլ ծափ է տալիս ու գու-
գոսում՝ «Արի՛, քեռի՛ ջան, ու ինձ սավանակ բե՛ր»։
Հայրիկը և քեռի Ալեքսանդր Զուտկիխը մըցում են
իրար հետ, թե ով ավելի շատ ու որակով արտադրանք
կտա, նամակ են գրել իրար ու պայմանագիր էլ ունեն։
Աչքովս եմ առևել պայմանագիրը՝ տակին հայրիկի մեծ-

մեծ ստորագրությունը։ Այս, թե ով է իմ հայրիկ Գեղամ
Արտեմիչը։ Իսկ ես, գիտե՞ք ինչ եմ մտածում։—ի՞նչ լավ
կլիներ, —ասում եմ, —եթե քեռի Չուտկիխն ինձ նուան
տղա ունենար, Ես էլ նրան նամակ կդրեի ու այ թե
ինչ կասեի։—«Սիրելի՝ Վոլոդյա (կարծում եմ, որ նրա
անունն այսպես կլինի), մեր հայրիկները մրցում են իրար
հետ, արի մենք էլ մրցենք ու տարեվերջին տեսնենք
ով ավելի շատ հինգ կունենա։ Հետո էլի շատ բան կդրեի
մեր դպրոցի ու սիրոներական հավաքութների մասին,
մեր միշտը ինյան պարտեզի մասին, ապագա արտիս-
տուհի Թամար Ասմարյանի ու նրա Զոյտյի մասին, շատ,
շատ բան։ Նկարներ ու կոլեկցիաներ կուղարկեի նրա
կարմիր անկյան համար, իսկ Վոլոդյան էլ ինձ կդրեի
Մոսկվայից, նկարներ կուղարկեր իմ ալբոմի համար,
կծանոթացներ իր ուսուցիչներին ու ընկերներին... Նա
կտառմեր, թե ինչպես ամեն առավոտ դպրոց գնալիս
նայում է Կրեմլին, տեսնում է, գիտե՞ք ում՝ Ստալինին...
Ամեն առավոտ, հասկանում եք, թե դա ինչ երջանկու-
թյուն է։ Տեսնում է ու դիմարկը հանելով ասում։—Բարե՛
ձեզ, Ստալին պապիկ...—Ստալին պապիկը նայում է Վո-
լոդյային, ձեռքը բարձրացնում է, ինչպես նկարում, ու
ասում է։—Բարեի լույս, Վոլոդյա, դպրոց ես դնում...
Երանի՛, երանի՛ քեզ, սիրելի՝ Վոլոդյա, ի՞նչ լավ է
սկսվում քո առավոտը։

Բայց, Վոլոդյա, չկարծես, թե միայն դու ես նայում
կրեմլի կողմը. տեսնում Ստալին պապիկին ու ողջու-
նում։ Ես էլ եմ ամեն առավոտ նրան ողջունում մտքում։
— Բարեի ձեզ, Ստալին պապի...— Ու լսում եմ նրա հա-
րազատ ձայնը՝ Բարեի լույս, Սուրիկ, դպրոց ես դնում...
Բոլորն են նայում կրեմլի կողմը, Վոլովյա, բոլորը
ամբողջ աշխարհը։ Զե՞ որ բոլորիս առավոտն էլ այնտե-
ղից է ծագում...
... Ահա թե ինչպես է սկսվում իմ առավոտը։

ԽԱՐՈՒՅԿԻ ՄՈՏ

Բլրաշարքի գաղաթներով մալրամուտ է իջնում արելը, և ստվերները ձգվում են երկանը, երկարութոչուներն ուրախ աղմկում են ծառերի կատարներին ու թփերի մեջ։ Հովից շրջում են դաշտը մասրենիները։ Շուտով հանդչում են արեկի վերջին շողերն էլ, ամպերի շիկնած ծվենները դառնում մոխրագույն, ապա մթնշաղը դանդաղ բարձրանում է ձորն ի վեր։

Իրիկնային այդ անդորրը միանգամից լցվում է թմբուկի ճայնով։ Փողի կանչը արձագանք է տալիս հեռուներում։ Խարույկի ազդանշան է։ Սունկերի պես այս ու այն տեղ աճած վրաններից, առվի կանաչուտից ու թփուտներից դուրս են թոչում պիոններները և շտապում են բոլորելու խարույկը։

Օրվա հերթապահը նշան է տալիս, և բոցի ահազին լեզուները թրատում են խավարը։ Երեխանները ծափահարում են։ Խարույկի լույսով լուսավորվում է անտառը, և ծառերի կատարները դեղին ցոլքեր են ստանում։ Երկընքում մի ձեռք հրդեհեց աստղերը, — թե՞ դրանք խարույկի կայծերն էին։ թուան սիեզերքի անհունության մեջ։ Մեջքի վրա կիսով չափ պառկած մի պիոններ երազուն նախում է բոցի ամենաբարձր լեզվակին ու ընկերոջը կամացուկ ասում։

— Սուրիկ, ի՞նչ ես կարծում, Մարսից կերևան մեր խարույկը, հը...

— Իհարկե կերեա, — ասում է Սուրիկը։

— Ասես՝ հիմա էնտեղ էլ ամա՞ռ է, — նորից հարցնում
է երազողը: Բայց Սուրիկն արդեն չի հասցնում պատաս-
խանել: Սկսվում է հանդեսը և բոցավառվող ցախի
ճարճառյունը կորչում է պիոներական երդի միա-
համուռ տակտի մեջ:

Աշխատի՛ր, սովորի՛ր դու, սիրի՛ր հայրենիքը,
Սովետական երկրի պիոներ:

Երազողն ինքն էլ է երդում ու հետն էլ մտածում,
որ հավանաբար այժմ Մարսից կլսեն նաև իրենց երգը,
այնքան ոժգին է դղրդում այն:

Եթե մարում են երդի վերջին հնչյունները, հեր-
թաղահը շնորհավորում է պիոներներին խարույկի առ-
թիվ և հայտնում հանդեսի առաջին բաժնի թեման՝ «Իմ
կյանքի անմոռանալի դեպքը»:

— Ունեն մտրդու կյանքում, — ասում է նա, — շատ
լավ ու վատ դեպքեր են պատահում, բայց լոլորը չես
հիշի ու հետաքրքիր էլ չէ: Իսկ էնովիսի դեպքեր էլ են
պատահում, որ չես մոռանում ու չպետք է մոռանալ:
Դա շատ օգտավետ կլինի: Ճիշտ չէ, ընկերներ:

— Ճիշտ է, ճիշտ է, — ուրախ աղմիում են պիոներ-
ները:

— Դե, որ ճիշտ է, — ժպտալով ասաց հերթաղա-
հը, — ինչպես որ պայմանավորվել ենք, ամեն մեկս
հերթով պատմենք՝ «Իմ կյանքի անմոռանալի դեպքը».
համաձա՞յն եք:

Նորից ուրախ աղմուկ՝ իհա՛րկե, իհա՛րկե...

— Ո՞վ է ուզում տոաջինը պատմել:

Մի բողեի չափ լություն տիրեց: Լսվում էր վառ-
վող վայտի ուրախ ճաճառը, որ բոցի անհամար լեզ-
վակներով կարծես պատմում էր «Իր կյանքի անմոռա-
նալի դեպքը»:

— Դե, ընկերներ, ով է ուղարձ, — կրկնեց հերթականը:

Տեղից կանգնեց թխաղետ, զանգրահեր մի տղակալմիր վզկապով:

— Վահանը, Վահանը, — ձայն տվին այս ու այն կողմից:

Վահանը լուրջ դեմք ընդունեց ու զգաստ կանգնեց մի թմբի. ապա հայացքն ողղելով խալույկի բոցերին, խոսեց.

— Ես երբեք չեմ մոռանա այն օրը, երբ հայրիկո բանակից վերադարձավ. Ես նրան չեմ տեսել, շատ փոքր եմ եղել, որ նա բանակէ պնացել: Բայց մայրիկից շատ էի լսել նրա մասին, ու նա միշտ ի՞ւ աչքի առաջն էր, երազումն էլ շարունակ նրա հետ էի: Ամիսը մեկ երկու նամակ էինք ստանում նրանից ու շատ էինք ուրախանում: Նա դրում էր, թե լավ կովելու համար քանի շքանշան է ստացել, իսկ ես երազում էի, որ երբ նա վերադառնա, մի շքանշանն ինձ կտա... Այսպես էի ուղում, այնպես... Բայց մի անգամ էլ հայրիկի նամակն ուշացավ: Անցավ մի ամիս, երկու ամիս, հինգ ամիս, նամակ չկա ու չկա: Ի՞նչ էր պատահել: Մայրիկը շարունակ լաց էր լինում: Շատ, շատ ախուր էինք:

Մի առավոտ էլ ես վեր թուա անկողնուց ու գոռում եմ ահայրիկ... Չեոքս պարզում եմ, որ գըկեմ, իսկ նա չկա: Ոչ ոք չկա տանը: Նոր միայն գլխի եմ ընկնում, որ երազումն եմ տեսել նրան: Լավ էր՝ մայրիկը չիմացավ ու ես նրան ոչինչ չասացի, շատ կտխրեր: Իսկ ես ամբողջ օրն ուրախ էի: Միշտ մոռանում էի, որ տեսածս երազ է և սպասում էի, թե ահա ուր որ է՝ հայրիկը կդա: Նույնիսկ որոշեցի դիմավորել նրան: Հակնում եմ ամենալավ շորերս, վզկապ կապում ու առանց մայրիկին որևէ բան ասելու դնում եմ կայարան: Նոր էի կառամատուց գորս եկել, երբ դնացքը սուլելով ու փնչաց-

նելով մոտեցավ։ Աչքերս չորս արած նայում եմ վագոն-
ներից իջնող ուղևորներին։ Ահա՛, ահա՛ իջնելու է նաև
հայրիկը՝ մայորի փայտուն ռւսադիրներով, իս լո՛վ, իմ
անձանոթ հայրիկը։ Զէ՞ որ ես շատ եմ կարոտել նրան
և ուզում եմ անպայման տեսնել։ Բայց նա չկա։ Բոլորն
իջնում են, վագոնները դատարկվում, կառամատույցումն
էլ հատ ու կենա մարդիկ են մնացել։ Իսկ նաև... «Երեխ
վաղը կդա»՝ մտածում եմ ես և տիսուր վերադառնում
տուն։ Մյուս օրը նորից գնում եմ հայրիկին դիմավո-
րելու, և նորից նա չի դալիս։ Այսպես՝ մի ամբողջ շաբաթ։
Մի օր էլ կայարանից դատարկ տուն եմ վերադառնում,
հուսահատությունից քիչ է մնում լաց լինեմ ու մտքումն
էլ բարկանում եմ մայորի վրա, որ ոչ նամակ է գրում ու
ոչ էլ դալիս է, իսկ ես ու մայորիկը շատ ենք մտածում
նրա մասին։ «Այս, թե ես քո ուներալը լինեի»՝ մտա-
ծում եմ ես և բարկությունից լալիս։ Մեկ էլ կողքիցս
անցնում է մի զինվորական և ձեռքը դլխիս դնելով
տուժ՝ «Քեզ ի՞նչ է պատահել, բալիկ ջան, ի՞նչու ես
լալիս։ Այնպես ծանոթ է այդ ձայնը. նայեմ, տեսնեմ՝
մայոր է։ «Հայրիկ», — ճշում եմ ես ու փաթաթվում մա-
յորի ոտներին։ «Հայրիկ, սիրելիս, եկամ, վերջապես
եկամ...» ասում եմ ես, իսկ մայորը, որ մի ձեռքին
ճամպրուկ ունի, շփոթվում է, կանգնում, ճամպրուկը մի
կողմ դնում, ինձ գրկելով նայում է աչքերիս։ Հետո նա
ինձ բարձրացնում է գետնից ու սեղմում կրծքին...»

— Ահա՛, թե ինչպես եկավ հայրիկը և որն է իմ
կյանքի անմոռանալի դեսպը, — խոսքն ավարտեց Վա-
հանը և երեխաները ուրախ ծափահարեցին։ «Այ թե
ճանաչել է անձանոթ հայրիկին», «Ես էլ կճանաչեի»,
«Զէ, մի պարծեցիր», — լսվում էին այս ու այն կողմից։
Զայն խնդրեց Մարսի մասին երազող սիսները։

— Ես էլ չեմ մոռանա, թե ինչպես մի անգամ ինքնաթիռ էի նստել ու սլանում էի վեր, վեր, ամողերից էլ վեր, — սկսեց նա հայացքը աստղերին հառած, — այնպես լավ էր, այնպես թեթև։ Մեկ էլ սկսում ենք իջնել։ Օդաչուին հարցնում եմ՝ Ո՞ւր ենք հասել։ — Նա էլ թե՝ Բա չդիտե՞ս, Մարսի վրա ենք... — Ուրախությունից ճշացի ու վեր թռա... երազ էր։

Ոմանք փոթկացին, իսկ նա հանգիստ ավելացրեց։
— Այ թե իրականում այդպիսի մի դեպք պատահեր ինձ հետ, ես երբեք չէի մոռանա այն... Բայց դուցե և պատահի, ով դիտե... Այ, թող մեծանամ։

Նրանից հետո խոսք վերցրեց Արմավիրից հյուր եկած ավագ ջոկատավար Անտոն Գարայանը։



Ա Դ Ա Վ Ն Ի Ն Ե Ր

(Անտոն Գարայանի պատմածը)

Գերմանացիները մեր դյուզը մտան 1942 թվի աշնանը, մի անձը եռու ու տխուր օր։ Հայրս տանը չէր։ Նախորդ գիշերը նա անտառ էր գնացել ու միացել պարտիզանական ջոկատին։ Նրա հետ անտառ գնացին քեռի եղողը, դպրոցի դիրեկտոր Անտոն Վասիլեիչը և նրա կինը՝ ուսուցչուհի Կատյա Ֆեոդորովնան, դարձոնիստ Իվանը, երկու սափրիչները և էլի շատերը։ Դյուզում մնացել էին պառավ կանայք, ծերեր ու եղեխաներ։ Ես էլ հայրիկի հետ կդնայի, բայց մայրիկը հիվանդ էր, խնամող էր հարկավոր։

Երեկո է։ Նստել ենք ու լուսամուտներն ամուր փակել, սպասում ենք։ Ինչի՞ ենք սպասում՝ ինքներս էլ չգիտենք։ Գուցե հենց արդպես էլ մահամերձներն ին սպասում... Մայրիկը լաց է լինում ոչ թե ցավից, թեև նըահիվանդությունը ծանր էր։ Նա լալիս էր հայրիկի համար, մեծ եղբորս՝ Գուրզենի համար, որ երկու տարի է ուաղմաճակատումն էր, ինձ համար, ըոլորի համար, որոնց վրա ծանրացել էր անորոշ ու մոայլ ճակատագիրը...»

Այդ դիշեր գյուղում ոչ ոք չքննեց։ Անվերջ գորդոցով տանկեր ու մեքենաներ էին անցնում, անկանոն կրակոցներ էին լսվում, հեռվից գալիս էր ուաղմաճակատի որոտը։ Ես էլ էի արթուն ու տինոլիսի բաներ էի երազում, այնովիսի...

Իսկ առավատը մեզ ուրիշ բան էր սպասում։ Լույսը դեռ չբացված բակի ու տան դռները ջարդելով, տեղահան անելով տուն թափովեցին սի խումբ զինվորներ և սկսեցին տակն ու վրա անել սենյակները, մասանը, խորդանոցը։ Մարսափից ու անզորությունից ես կուչ էի եկել մայրիկի գրկում և հեկեկում էի։ Հետո շատ էի ամաչում այդ թուլամորթության համար ու ինքս ինձ նախատում, բայց այն ժամանակ ոչնչի մասին չէի մտածում։ մոռացել էի նույնիսկ մի օր առաջ հայրիկի ոված խրատը՝ Չվախենա՛ս, Անտոն Ջան, ու լաց չլինեալ շնամիների առաջ։ Նրանց հաճելի է տեսնել մեր լացն ու արցունքը։

Քիչ հետո զինվորները լցվեցին մայրիկի ննջարանը։ Մայրիկն ինձ ամուր սեղմել էր կրծքին, դլուխն էլ չբարձրացրեց տեսնելու, թե ինչ են ուզում ֆաշիստներ։ Ինչոր բլլաջնելով՝ զինվորներն սկսեցին պակել պատի գորգերը, մայրիկի ասեղնազործները։

ջարդել, բաց անել հազուստեղենի ու դարդեղենի դարակները... Ապա նըանցից մեկը, երեխ ավազակապեաը, մոտեցավ մայրիկին ու կոտրտած, համարյա անհասկանալի ոռւսերենով հայտնեց, որ տունն աղատենք:

Մայրիկը՝ ոչինչ չպատասխանեց: Ո՞չ շարժվեց և ոչ էլ գլուխը թեքեց՝ տեսնի, թե ով էր իրեն դիմում: Գոնենե բացատրեր, որ ինքը հիվանդ է, չի կարող տեղից շարժվել: Գերմանացին կարծելով, թե մայրիկն իրեն չըհասկացավ, ասածը կըկնեց: Բայց մայրիկն առաջկա պես լուռ էր ու անշարժ: Գերմանացին կատաղեց: Երկու ձեռքով ամուր բռնեց իմ մեջքից, քաշելով պոկեց մայրիկի զրկից և շղթեց հատակին: Մայրիկը ծանր անքաց ու իմ հիշողության մեջ մեխվեց մորս արտասահմած մի բառը՝

— Գաղաններ...

Այլիս ոչինչ չեմ հիշում ես:

Աւշըի եկա մեկ օր հետո, մի մուժ ու խոնավ նկուղում: Աչքերս բայց եմ անում, նայում եմ շուրջս,—«Մայրիկ»,—ասում եմ հաղիսվ լսելի ձայնով:

— Ես եմ, Անտոն Չան,—լսում եմ մեկի շնորհն ու մի փոքրիկ չոր ձեռք զգում եմ ճակտուիս,—սոված չե՞ս, ծաբավ չե՞ս, բալիկ...

Ես ճանաշում եմ, դա մայրիկի ձայնը չեմ, դա Եվդոկիա տատն է, կոլխոզի թոշնարուծական ֆերմայի աշխատողը, որը հաճախ էր մեղ մոտ դալիս ու մայրիկի հետ երկար զրուցում: Ինչու էի ես ընկել նրա մոտ, ուր է մայրիկը, ո՞ւր են ֆաշիստները: Եվդոկիա տատը շարունակ ճակտու էր շփում ու կըկնում:—Մի բան կեր, բալիկ, ախը երկըորդ օրն է, որ ոչինչ չես դըել բերանդ:—Ես հարցնում եմ մայրիկի, մեր տան մասին, իսկ Եվդոկիա տատը ոչինչ չի տում, թարցնում է:

Բայց հետեւալ օրն ամեն ինչ իմացաւ Մայրիկին
գերմանացիները տանջամահ էին արել ինձ Ել կիսամեռ
դցել էին վողոց։ Եվդոկիա տատը դբկել, տուն էր ըե-
րել, անկողին դրել ինձ ու ամբողջ ժամանակ հոգ էր
տանում, որ ես ուշքի դամ։

Այսպես, մեկ օրվա մեջ ես որբացաւ Որբ ու ան-
տուն։

* * *

Միակ բանը, որին դեռ չեր հասել թշնամու ձեռքը,
իմ աղավնիներն էին։ Մի զույգ սպիտակ, սիրունիկ
աղավնի։ Երկու տարի առաջ, իմ ծննդյան օրը հայրս
ինձ աղավնու երկու ձագ նվիրեց։ Ես նրանց համար
տաք ու փափուկ բուն շինեցի մեր երկհարկանի տան
ձեղնահարկում, կերտկրում էի իմ տմանից, վարժեցնում
էի, ու նրանք մեծացան։ Նստում էին ուսերիս, պտույտ
էին դործում դլխավերես ու այնպիսի ճարպիկ թոշկո-
տումներ էին անում, որ ընկերներս թուլանում էին
ծիծաղից։ Ճաշին դալիս-կանգնում էին սեղանի ծայրին
և ափիս միջից հացի վշշանքներ ուտում։ Պատահում էր,
որ նրանք ցեխոս ոտներով կեղտոտում էին սփոցը։
Մայրիկը բարկանում էր նրանց վրա, դուրս քշում, բայց
քիչ հետո կիսաբաց լուսամուտից նորից ներս էին ընկ-
նում ու այլնս սեղանի վրա չէին կանգնում, այլ շրջում
էին հատակին։

Եվդոկիա տատը պատմում էր, որ երբ ես ուշագնաց
ընկած եմ եղել վողոցում, ճերմակ բարեկամներս
շաբունակ պտույտ են դործել իմ դլխավերերում, դեռ դեռ
են նետվել։ Իսկ երբ տառն ինձ իր տունն է բերում ու

պառկեցնում, նրանք հա պտավում են տան շուրջը,
տխուր-տրտում դունդունում և միայն ուշ երեկոյան
թոշում, գնում իրենց բույնը:


Հենց որ ես ուշքի եկա, նրանք արդեն ինձ մոտ
էին: Եվդոկիա տատը լուսամուտը բաց էր արել ու նը-
րանց ներս կանչել: Ամբողջ օրը ինձնից անբաժան էին,
իսկ երեկոները, հնազանդ իմ նշանին, թոշում, գնում
էին իրենց տաքուկ բույնը:

Ֆաշիստները մեր տունը դարձրել էին զինասլահետա-
խակ կից սենյակներից մեկում տեղավորվել էր կայա-
զուրի շտաբը: Գիշեր-ցերեկ զինված պահակություն էր
սահմանված շենքի ամբողջ շրջակայքում: Միայն աղավ-
նիներն էին անարդել ել ու մուտ անում իրենց բնում՝
խոտով ու ծղոտով լի ձեղնահարկի մի անկյունում: Բայց
նրանք էլ կարծես զգում էին, որ դյուղի ու մեր տան
հետ ինչոր վատ բան է պատահել, անհասկանալի իրա-
րանցում է սկսվել դյուղում, դարձել էին մի տեսակ
զգույշ, կտուրներին շատ չեին շրջում, իսկ իրենց բույն
էին գնում միայն երեկոները: Այդ թերես նըրանից էլ էր,
որ զինվորները մի քանի անգամ կրակել էին նըրանց վրա
ու վախեցրել: Չնայած դրան, աղավնիների ընտանիքը
պարաստվում էր նոր ձագեր հանելու: Մարին արդեն
ձու էր տծել, ջերմացնելու էր, որ դուրս դային սիրուն,
սպիտակ ձագեր:

Բայց այդ ձվերը երբեք չջերմացան...

* * *

A 30503
Մի գիշեր Եվդոկիա տատն ինձ արթնացրեց քնից:
Վախեցած վեր թռա, տեսնեմ տանը մի մարդ է նստած



մեծ քուրքով ու փափախը գլխին. — Ո՞վ է, — շշնջալով հարցում եմ տատին, իսկ պատասխանում է ինքը՝ եկվորը:
— Ես եմ, Անտոն Ջան, գարմոնիստը, հայրիկիդ մոտից եմ գալիս: Խնդրեց, որ քեզ անպայման տեսնեմ: Շատ էր անհանգիստ քեզ համար... Փառք տածու, եվդոկիա տատն ասում է, որ լավ ես:

Մինչ նա խոսում էր, ես փաթաթվեցի նրա վզով ու լայ եղա: Գարմոնիստն ինձ ովախթարեց մայրիկի համար, սիրու էր տալիս, հետո էլ հառկացրեց, որ երկու օրից հետո, գիշերով հարձակվելու են ֆաշիստական կայազորի վրա:

— Պինդ կաց, տղա Ջան, հիշիր, թե ինչպես քաջ են եղել ոկոլուցիոներները, — ասաց նա, էլի մի երկու պատվեր ավեց, թե ինչպես է հարկավոր զվուշացնել գյուղացիներին հարձակման մասին և գնաց: Այդ ամբողջ գիշերը ու հետեւյալ երկու օրը շարունակ ես երազում էի պարտիզաններին ու հայրիկին դիմավորելու մասին... Երազում էի քաջ ոկոլուցիոներների, Զապահի մասին: Այնպես էի ուզում մի գնդացիր ունենալ, նրանով հարձակվել ֆաշիստների վրա, նրանց քշել գյուղից, գետն անցկացնել, ու թեկուղ ինքս էլ ոի գնդակով զոհվեի գետակի անենախոր աեղում, Զապահի նման...

Բայց հետո մտածում էի, որ այդ լավ երազներով չէր կարելի օգնել մերոնց հարձակմանը ու տիրում էի: Այսպես տիսուր ու անորոշ անցավ օրը: Մուալ իրիկուն էր: Աղավնիներին կեր ու ջուր տալով նշան արի, որ թռչեն: Թեսերը թափահարելով նրանք օդ բարձրացան, մի երկու անգամ ճախրեցին բարձրութ և ուղղվեցին դեպի իրենց բույնը: Բայց հենց այդ պահին օդում կրակոց լսվեց և աղավնիներից մեկը, մի քանի անգամ պտույտ գործելով, բաժանվեց ընկերոջից: «Խը-

փեցին», մտածեցի ես և վազ ամիս Աղավնին ուղղությունը կորցրած ընկնում էր ցած։ Մի քանի վայրկյան ես և նա սպիտակ թերեւներն արնոտած թրմվաց գետնին։ Երկու զինվոր հոհուալով հարձակվեցին վիրավոր թռչունի վրա։ Նրանցից մեկը թոցրեց աղավնուն գետնից և պոկեց նրա սքանչելի գլուխը... Արյունը ցայտեց վոքրիկ շիթերով ու կաթիլ-կաթիլ ծորաց գետին։ Աչքերս մթնեցին, կարծես աշխարհը գլխիս փուլ եկավ։ Նստեցի մի քարի ու հոնդուր-հոնդուր լաց եղա։ Կենդանի աղավնին տագնապալի պտույտներ էր դործում զինվորների գլխավերեւ, երբեմն ներքի էր սուրում ու թափով վեր բարձրանում, ասես ողբում էր ընկերոջ զոհվելը։ Թաշխտները նրա վրա էլ կրակ բաց արին, բայց վրիպեցին, և նա սարսափահար նետվեց բույնը՝ կյանքում առաջին անգամ մենակ ու անընկեր անցկացնելու ծանր գիշերը...

Առավոտը զարթնեցի թերի ուժգին բախումից մեր թուա անկողնից և դուռը բաց արի։ Անընկեր աղավնին էր տխուր ողջունում ինձ։ Սիրտս մղկտաց, աչքերս լցվեցին արցունքով և աղավնուն սեղմեցի կը քիս։ Հիմի էլ ես էի մխիթարում նրան... Երկուսս էլ վրեժ ունեինք թշնամուց։ Աղավնին տխուր կուչ էր եկել, ոչ ուտում էր, ոչ խմում, հիվանդ էր։ Մարիկի կորուստը նրան տանջում էր։ Գոնե լեզու ունենար ու իր վիշտը պատմել կարողանար, սիրտը թեթևացներ։

Մեկ էլ, որտեղից որտեղ, զլխումս մի միտք շողաց այնքան պարզ ու որոշակի, որ կարծես շատ վաղուց էի մտածել ալդ մասին ու հարկավոր էր միան ձևակերպել։

— Մենք վրեժ կլուծենք թշնամուց, մենք կսկզբեցնենք զինապահեստը...

«Մենքը» ես ու աղավնին էինք։

... Մոայլու ցուրտ ելեկո էր։ Փշում էր հյուսիսի քամին, որ մեր կողմերում ձյան նշան է։ Մութը կուպը պես լցվել էր բոլոր խորշերում ու անկյուններում, իսկ գյուղը լուռ էր, ինչպես զերեզմանոց։ Ես ու Եվդոկիա տատը կատարել էինք գալմոնիստի հանձնարարությունը և ամբողջ գյուղը տեղյակ էր սլարտիզանների զիշերվա հարձակմանը։ Հիմա հարկավոր էր «վրեժը լուծել»։

Աղավնուն պահել էի մոտաւ Ամբողջ ժամանակ նա ուսերիս էր նստած, թույլ դունդունում էր, կտուցը քսում էր ծոծրակիս, ակտնջիս, ծնոտիս տակը։ Երեսի համբուրում էր։ Իրիկվա մի պահի էլ որոշեցի սկսել...

Աղավնուն ուները շոր վաթաթեցի, թևերի տակը բամբակ դրեցի այնպիս, որ չխանդարի թուիչքին, շորի մի կտոր էլ վղից անցկացը, նավթով ու մազութով։ Թրջեցի շորերն ու բամբակը... և տանից դուրս եկանք Խավարն ավելի էր թանձրացել։ Ոչ մի տեղ ճրագ չէր վառվում, բացի մեր տանից։ Գերմանական կայազորի շտաբում դեռ արթուն էին։ Հարեան շենքերից մեկի անկյունում կանդ առաւ։ Մի վերջին անգամ կրծքիս սեղմեցի իմ հարազատին, համբուրեցի փոքրիկ գլուխը, կտուցը, տոտիկները, որոնք ինչքա՞ն էին կեղպտակ մայրիկի սիուցը... Աղա վառված լուցելին մոտեցրի նրան ու բաց թողին նշան անեւ լով դեպի իր բույնը... Խավարի միջով թոշում էր բոցի մի կտոր, ու երբ նո իջավ տան կտուրին, թվաց, թե երկնքից աստղ էր՝ ծորաց նեղքի։ Այս իմ աղավնուն աստղը...

Մեկ օր հետո շատ լաց եղա աղավնուն համար, բայց այդ պահին սիրտս քար էր կտրել։ Միայն մի միտք էր իմ մեջ կենդանի՝ կրոնկվի՛ արդյոք ձեղնահարկի ծրատը,

ի՞րդեհվե՞ն շենքն ու զինապահեստը՝ կայազորի շաաբն
էլ հետը: Իսկ եթե ոչինչ դուրս չդա, եթե աղավնին
խոսորի ճանապարհը, կամ պահակները շուտ գլխի ընկ-
նեն ու կանխեն հրդե՞հը: Այն ժամանակ կայրվի, մոխիք
կղառնա ճերմակ աղավնին ու մեր վրեժն էլ կմնա ան-
լուծելի...

Մինչ ես այս ծանր մտքի հետ էի, մեկ էլ
տեսնեմ մեր տան կտուրից բոցախառն ծուխ է բարձ-
րանում... փոքր անց լսվեց սարսափելի դղրդոց ու - ես
շպրտվեցի դետին: Հորենան տան պատը փուլ եկավ և
ինձ տակով կաներ, եթե մոտիկ լինեի: Խուճապ ու
վայնասուն սկսվեց գյուղում: Այնուհետև ես համարյա-
բան չեմ հիշում, անշունչ ընկել եմ մինչեւ լուսաբաց:
Պարտիզանները հետո պատմում էին, որ զինապահեստի
ոլայիշյունը ցերեկի պես լուսավորել էր ամբողջ գյուղն
ու շըջակայքը: Դա համարելով աղդանշան, նրանք էլ
սկսել էին իրենց հարձակումը, և լուսադեմին մի շաբք
գյուղեր մաքրված էին ֆաշիստներից:

— ... Իմ քաջ, իմ հնարագետ, — կրծքին սեղմած համ-
բուրելով ասում էր հայրս, երբ ես նրան պատմեցի
եղելությունը: Մենք կանդնած էինք մեր տան փլա-
տակների մոտ ու երկուսս էլ ուրախ էինք... Զէ՞ որ
վրեժ էինք լուծել թշնամուց...

— Մենք նոր առն կկառուցենք, Անտոն, — ասում
էր հայրիկը, -- ավելի բարձր, ավելի՝ դեղեցիկ: Դու դար-
ձյալ աղավնիներ կունենաս և նրանք աներկյուղ կսա-
վառնեն երկնքում...

— Ահա, թե ինչը ես չեմ մոռանա, ընկերներ, —
ձայնը փոքր ինչ իջեցնելով խոսքն ավարեց Անտոն
ֆարայանը:

Մեկ - երկու վայրկյան տիրել էր զսպված լուս-

թլուն։ Այլպող վայտի մտմառցն էր միայն առաջած-
վում շուրջը։ Անտառի գորշկանաչ ֆոնի վրա բոցը
խաղում էր արծաթավուն լեզվակներով ու երազուն
ցոլք էր արձակում դեպի աստղերը։

— Այդ իսկապես որ չպետք է մոռանալ, — ետեւի շար-
քից լովեց մեկի ճայնը։

— Ճիշտ է, չպետք է մոռանալ, — արձադանքեցին
ուրիշները, և հանկարծ լոլորը միանգամից սկսեցին ծափա-
հարել։ Իսկ Անտոն Գարայանը դեռևս կանգնած էր ան-
շարժ, հայացը խարույլի բոցերին հառած։ Հայրենական
տան հրդեհի կայծը չէ՞ր բռնկել այս խաղաղ ու երջա-
նիկ կրակը, որ վառվում էր խարույլի մեջ ու պիոներ-
ների հոգում…

«Իմ կյանքի անմոռանալի դեպքը» թեման անսպառ
ու շատ հետաքրքիր դուրս եկավ։ Երեկոն դնալով խո-
րանում էր, բայց ոչ ոք չէր մտածում վրանները դնա-
լու մասին։ Թեկուղ ամբողջ դիշեր կարելի էր նստել
կըակի մոտ, լսել ընկերների պատմածները, նայել եր-
կընքին, որտեղ խարույլի կայծերից գոյացել են անթիվ,
անհամար աստղեր, և երազել, երազել..»

Զայն տրվեց Լենա Սարոյանին։



Վ Ա Ր Դ Ե Ր

(Լենա Սարոյանի պատմածը)

Ես այն ժամանակ նոր էի երդում տվել ու ընդուն-
վել պիոներ և առաջին անգամ կարմիր վղկատ էի կա-
պում։ Այդ հինգ տարի առաջ էր Մի անգամ գասերից
հետո ջոկատավար ընկ. Լեռն Քարամյանն իր մոտ կան-
չեց Հասմիկին, Ամիային և ինձ։

— Զոկխողիրդի հանձնարարությամբ դուք հարևան դոսպիտալի շեֆն եք: Կդնաք այնտեղ ու կներկայանաք կոմիսարին, — ասաց նա և ավելացրեց, թե ինչ ենք անելու այնտեղ: Վիրավորներին այցելել, զըռւցել նրանց հետ, խնամել, նրանց համար նամակ գրել: — Նրանք արժանի են մեր սիրուն ու հոգատարությանը, — վերջացրեց ջոկատավարը, և մենք հուղված դուքս եկանք դպրոցից: Ճաշին այդ մասին պատմեցի մերսնց ու չգիտեմ ինչու՝ այնպես հուղված էի, որ քիչ էր մնում՝ լաց լինելու հայրիկը դովեց ինձ, իսկ մայրիկը դրկեց, համբուրեց մաղերս և տխուր ասաց.

— Ինչ լավ է, Եենա ջան, ուշադիր կլինես... Ո՞վ գիտեր, քեզ նման մի աղջիկ էլ դուցե եղբորս է խնամում...

Ես հասկացա մայրիկին, հիշեցի քեռուս, որին բոլորս այնպես շատ սիրում էինք, ու ավելի հուղվեցի: Անհամբեր սպասում էի Հասմիկին և Ասիային, որ շուտ գնանք դոսպիտալ, կարծես թե իրավ քեռիս էր ինձ այնտեղ սպասում:

Երբ աղջիկները եկան և պատրաստվում էինք դուքս դալ, մայրիկը ծաղկամանից մի-մի վարդ վերցրեց ու տովեց մեզ:

— Կնվիրեք... Նրանք ծաղիկ շատ են սիրում... Եվ առհասարակ լավ չէ դատարկ ձեռքով... — ասաց նա, և ես դարձյալ հասկացա մայրիկին. քեռին իսկապես վարդ շատ էր սիրում:

Դոսպիտալում կոմիսարը մեղ սիրով ընդունեց և ուղեկցեց պալատներից մեկը:

Վիրավորների աշխարհը նոր ու անծանոթ էր ինձ համար: Ճիշտ է, վիրավորներ շատ էի տեսել հենակներով քայլելիս, կամ ձեռքը կապած, բայց հիվանդանոցում երբեք չէի եղել ու չգիտեի՝ ինչպես վարվել նրանց հետ: Ինչի՞ մասին խոսել, որ անհամ ու ծիծաղելի չլինի:

Մտածելով այդ մասին, ևս հուղվել էի ու անհանգիստ
այս ու այն կողմն էի նախում:

— Այստեղ մի վոքը ավելի ծանր վիրավորներ են,
բայց բարի ու լավ մարդիկ են և դուք անպայման
կոիրեք նրանց, — լսում էի կոմիսարի ձայնը, ձեռքս կը քա-
քիս սեղմած:

Ներս մտանք: Ասես երազում ալանջիս հասան կո-
միսարի խոսքերը.

— Բարե ձեզ, ընկերներ, պիոներներ են տեսու-
թյան եկել...

Զգիտեմ «ընկերներն» ինչ ասացին, բայց ես միան-
գամից մի հայացքով տեսա նրանց և ամեն ինչ դարձավ
այնպես հասկանալի, կարծես այդ մեր տան սենյակնե-
րից մեկն էր, որտեղ սովորական խաղաղ դիրքով պառ-
կել էին ծանոթ, հարազատ մարդիկ: Պալատում ընդա-
մենը երեք վիրավոր էին, և ես տեսնում էի սպիտակ
սավանների տակից երեացող նրանց գլուխները, ձեռները:
Նրանցից մեկն այնպես լավ էր ժպտում ու այնպես
դուր եկավ ինձ, որ ես ուղղակի դիմեցի դեսի նրա մահ-
ճակալը և ձեռքիս վարդը մեկնեցի նրան:

— Ծանոթանանք, քեռի, ես Լենա Սարոյանն եմ, —
ասացի ես:

Վիրավորը, դժվարությամբ ուղղվելով տեղում, ձեռքն
ինձ մեկնեց և երբ ես ձեռքս տվի, նա իր ահազին ավով
ամուր բանեց ու ձգեց իրեն, համբուրեց ճակատ, մա-
զեց, ձեռներս: Նա ժպտում էր այնպես բարի ու լավ,
այնպես մտերիմ:

— Իսկ ես կասկիտան Վասիլի Իվանովիչ Պետրովն
եմ, աղավնյակս... Ինչ լավ ես արել... Ես վաղուց էի
սպասում քեզ... Հավատում էի, որ անպայման կգաս...
Լենա է քո անունը լավ է, աղնիվ խոսք... — ասում էր
վիրավորը ծանը հեալով:

Ասլան ու Հասմիկն էլ իրենց վարդերը նվիրեցին մյուս վիրավորներին, ծանոթացան նրանց հետ և երկար զբուցում էին: Նրանք բոլորն էլ սպաներ էին, մեկը՝ մայրը, երկուսը՝ կապիտան, բոլորն էլ տարիքավոր՝ քառասունինդ-հիսուն տարեկան տղամարդիկ ու միատեսակ, կարծես բոլորն էլ իրար նման լինեին՝ մուգ ոսկեգույն մազերով, բարի, խաղաղ ժպիտով ու կապոյտ-կապոյտ աշըերով: Միայն իմ բարեկամի՝ Վասիլի Պետրովի մազերն արդեն սպիտակել էին, ասես նրա համար, որ ավելի բարի ու խաղաղ դարձնեն նրա հայացքը:

— Դուք աղջիկ ունեք,—հարցը ես Վասիլի Իվանովիչից, մտածելով, որ նա շատ լավ հայր կլինի և եթե աղջիկ ունենա, շատ, շատ կսիրի նրան:

Կապիտանն անմիջապես չպատառխանեց: Նրա ժպիտը հանդավ և նա մուսյլվեց: Բայց դա երկար չտևեց: Նա բռնեց մազերիս հյուսքից, ժպտաց և ծոր տալով պատասխանեց.

— Իհարկե ունեմ, աղավնյակս... գուցե հենց քեզ հասակակից լինի... Անունն էլ, կարող ես երևակակել, Լենա է, որ կա...

— Ճի՞շտ,—ճշացի ես ծափ տալով ու տեղիցս վեր թռա, ինչ լավ եղավ. ես նրան նամակ կգրեմ իմ ու ձեր անունից, հետո էլ առանձին... Ու ամեն ինչ կպատմեմ... Ես նրան այնպես կսիրեմ... Նա էլ պիոներ է, չէ, փողկասլ կապում է...—ասում էի ես վրա-վրա տալով:

Իսկ կապիտանը լուռ նայում էր ինձ ու ժպտում: Այդ օրը նա ինձ ոչինչ չասաց, բայց հետո իմացա, որ ես նրա Լենային նամակ գրել չեմ կարող, քանի որ կապիտանի ընտանիքից ոչ մի տեղեկություն չկար: Հայտնի չեմ, թե իինը թողնելուց հետո որ ուղղությամբ են գնացել նրա կինը, տղան ու աղջիկը՝ Լենան. կենդանի են, թե մեռած:

Այդ օրվանից ըոլորս այնպես մտերացանք իրար,
կազմես մի ընտանիքից լինելինք ու երկար անջատու-
մից հետո հանդիպել էինք միմյանց։ Ամեն օր դասերից
հետո ես, Ասյան և Հասմիկը այցելության էինք գնում
նրանց ու երկար զրուցում էինք։ Նրանք մեղ հետաքըլ-
քիր սկառմություններ էին անում ուղղմաճակատից,
իրենց երեխաներից, մենք էլ ողատմում էինք քաղաքի
նորություններից, մեր դպրոցից ու պիոնիրական ջո-
կատի աշխատանքներից։ Ամեն անդամ թարմ թերթեր
ու գրքեր էինք տանում նրանց համար։ Երբ ընթերցա-
նությունից ու զրուցից հոգնում էինք, սկսում էինք
երգել։ Մայորը ահագին, ձյունի սկս սպիտակ ձեռքը
առաջ էր մեկնում ու չափ էր տալիս։ Երդում էինք
ամենից շատ ուստական ժողովրդական երգեր, որ դպրո-
ցում ոռվորել էինք վերջերու։ Հետո մայորը պահանջում
էր, որ հայկական երգեր էլ երգենք, ինքը կըկին չափ
էր տալիս, խառնում էր իրար, շփոթվում ու բոլոր
միասին քըքջում էինք։ Ժամանակն այնպես ուրախ,
աննկատ էր անցնում, որ չէինք ուզում բաժանվել
իրարից, մինչև հերթապահ բժիշկը կամ քույրը չէին
նախազգուշացնում։

Բայց ամենից շատ ես կապված էի կապիտան Վա-
սիլի Իվանովիչի հետ։ Գուցե այդ նրանից էր, որ առա-
ջինը նրա հետ էի ծանոթացել, կամ որ նա էլ կենա-
անունով աղջիկ ուներ, կամ գուցե այն սկառմառով, որ
նա ամենից ծանր վիրավորն էր։ Արկի բեկորները ջար-
դել էին նրա ձախ կողը, վնասել թոքը, հանա դժվարու-
թյամբ էր շնչում։ Մի քանի անդամ կատարած վիրահ-
առություններն ուժասպառ էին արել նրան։ Բայց հենց
որ ինձ տեսնում էր, կարծես՝ հարություն էր առնում.
արնաքամ դեմքը ժալտում էր, աչքերը փալում էին բա-

բի ու անուշ մի կրակով։ Առաջին խել հանդիպմանը, երբ բաժանվում էինք, նա ինձ խնդրեց շուտ-շուտ այցելել ու, եթե հնարավոր է, բայց կարմիր գույնի շրջադղեստով գալ... Հետո էլի դիտողություններ արավ մաղերիս հյուաքերի, փոքրիկ, ճերմակ գոզնոցի ու գունավոր գուլպաների մասին։ Ես մայրիկին պատմեցի այդ ամենը և նա ինձ հազցրեց հենց այնպես, ինչպես կապիտանն էր պահանջում։ Հետեւյալ օրը նա ուղղակի գժվածի պես ընդունեց ինձ։ Դրկել, սեղմել էր կրծքին ու բաց չէր թողնում։ Երեխ արդեն բոլորովին նման էի նրա լենային..

Ամեն անգամ - հետս մի կարմիր թարմ վարդ էի տանում ու նվիրում Վասիլի Իվանովիչին։ Նա վերցնում էր վարդը, հոտ քաշում, հետո դնում աչքերին ու մեկ երկու ըոսկե մնում լուս, անշարժ։ Նկատում էի, որ նա շատ է սիրում ծաղիկ ու վարդ, և դա է՛լ ավելի էր մըտելացնում մեղ իրար հետ։ Զէ՞ որ իմ քեռին էլ միշտ կրծքին վարդ էր ունենում... Վասիլի Իվանովիչը դարձել էր իմ հոգարտության առարկան։ Մեր տանը, բարեկամների մոտ ու ընկերունիներիս շրջանում ես պարծենում էի նրա քաջությամբ, նրա հինգ շքանշաններով, նրա խարտյաշ ու խելացի լենայով... Մեղքս ի՞նչ թաքցնեմ, շատ բաներ էլ ինքս էի հորինում.. .

Դժբախտաբար կարճ տևեց մեր բարեկամությունը...

Մի անգամ էլ Վասիլի Իվանովիչն ինձ ընդունեց խիստ հուղված և անհանդիսաց։ Թեև աշխատում էր ցույց չտալ այդ, ժպառում էր ու կատակներ անում, նույնիսկ կերավ մալբիկի սլատրաստած թխվածքը, բայց զգում էի, որ այդ ամենը հենց նրա համար է, որպեսզի ծածկի իր անհանդստությունն ու հուղմունքը։ Այդ օրը նա շաբաթակ իր լենայից էր խոսում, պատմում էր, թե ինչպես նրա հետ ձուկ որսալու էին զնում քաղաքից

դուքս, վոքրիկ գետակում ու թե ինչպես մի անզամ
Լենան հաղիվ էր վրկվել խեղղվելուց:

— Իսկ դու սիրում ես ձուկ որսալ, — հարցնում էր
նա շոյելով մաղերիս հյուսքը:

Բաժանվելիս նա ազահորեն համբուրում էր ինձ ու
լաց չէր թողնում:

— Գնաս բարնվ, աղավնյակս... Գնաս բարնվ... — Եր-
կար ժամանակ լսում էի դեռ նրա հայրական անուշ
ձայնը:

Հետեյալ օրը գոսպիտալի դռանը տիսուր-տրատում
մեզ դիմավորեց կոմիսարը և հրավիրեց իր առանձնա-
սենյակը: Մենք անհանդիստ իրար երես էինք նայում.
«Ի՞նչ է պատահելու»: Երկար ժամանակ լոււթյուն էր տի-
րում: Վերջապես կոմիսարը հայտնեց, որ դիշերը վա-
սիլի իվանովիչը վախճանվել է... կարծես կայծակ խփեց
գլխիս, ցավից ու ստրսավից ես ճշացի ու ընկա-
դահավորակին: Ասյան ու Հասմիկն էլ շատ լաց եղան,
իսկ կոմիսարը, որ լավ դիտեր մեր բարեկամության
մասին, մխիթարում էր մեզ, — Դուք հպարտացեք, որ
այնպիսի հերոս, հայրենիքի անձնազոհ պաշտպան բա-
րեկամ եք ունեցել... —, ասում էր նա տիսուր շեշտով:
Երբ մի վոքր հանգստացել էինք, կոմիսարը մոտեցավ
ու ինձ մեկնեց թղթի մեջ խնամքով վաթաթված մի
բան:

— Մեռնելու մի քանի ըստե տոաչ, — պատմեց
նա, — կապիտանն ինձ իր մոտ կանչեց և ահա ոյս կապոցը
հանձնեց: «Կտաս Լենային: Թող նա ինքը բաց անի...»
հաղիվ կարողացավ արտասանել վասիլի իվանովիչն ու
աչքերը վակվեցին: Խնդրեմ, վերցրու, Լենա, և ինքու բաց
արա, կապիտանի նվերն է:

Կոմիսարի ձեռքից վերցնելով վաթեթը սեղմեցի:

կրծքիս ու նորից լաց եղաւ Դա իմ առաջին ծանր վիշտն էր, ու թվում էր, թե աշխարհում ոչ ոք այդպիսի վիշտ չի ապրել...

Հենց այդտեղ, կոմիսարի առանձնասենյակում բաց արի թանկագին կապոցը։ Դուքս եկավ կաշե գեղեցիկ մի թղթապանակ՝ կազմին ոսկեզօծ տառերով պրված՝ «Լենա»։ Թղթապանակի թերթերի մեջ խնամքով շարված էին իմ նվիրած վարդերը, որոնք թեև արդեն թառամել էին, բայց բուրում էին անմոռաց մի հիշողությամբ։ Վարդերի միջից դուքս եկավ վոքրիկ մի նկար՝ տառասնմեկ տարեկան մի աղջիկ, երկար, հյուսք արած նաղերով, կարմիր ժամավենով ու կարմիր շրջազգեստի վրա սոլիտար գոգնոցով...

— Լենա, սիրելի քույրիկ, — ասացի ես, իսկույն ճանաչելով կառիտանի աղջկան ու նկարը սեղակցի շուրթերիս։

...Մայրիկը լենայի նկարը մեծացնել տվեց, ու այժմ կախված է իմ ննջարանի պատին, իմ նկարի կողքին։ Երանք այնպիս նման են իրար, այդ երկու լենաները...

* * *

Լենա Սարոյանը հուզված լոեց, բոլորը տխուր նայում էին լենային ու ոչ ոք չէր համարձակվում ծպտուն հանելու իսկ երբ հուզմունքի պահը տեղի տվեց, ետեւ շարքերից ոտքի կանգնեց բարձրահասակ առլետիկ կազմվածքով մի տղա և դիմելով ընկերներին, ասաց.

— Իսկապես որ այդ էլ անմոռանալի դեպք էր, թեև շատ տխուր էր... Որ այդպես է, թույլ տվեք, ես էլ իմ խոսքն ասեմ... Ես երկար չեմ խոսի ու միայն այն լասեմ, որ իմ կյանքի ամենանշանավոր օրը Հաղթանակի օրն է և ես այդ օրը երբեք չեմ մոռանա...

Նրա մանկական սուր ձայնը զբնվում էր զիշերա-
յին խորհրդավորության մեջ և, կարծես, առձադանք
տվեց՝ սկզբում թույլ, հետո ուժեղանալով:

— Ես էմ, ես էմ...

Եվ, ասես, անելենույթ մի ուժով՝ ամբողջ հավաքույթն
ու անտառը դղրդում էին.

— Ես էմ, ես էմ...

Դանդաղ մարում էին խորույթի կրակները, իսկ
շրջապատը լցվում էր մանկական երգի խրոխա հնչյուն-
ներով.

Աշխատիր, սովորիր դու, սիրիր հայրենիքը,
Սովետական երկրի սլուներ:



Ն Կ Ա Ր Ը

Կարոյլի հայրը նկարիչ է: Նրա նկարները բոլոր
ցուցահանդեսներում կտեսնեք՝ վառ-վառ գույներով,
կարծեա՝ արևի ճառագայթներից լինեն: Փոքր հասակում
կարոն այդպես էլ մտածում էր.—առավոտ շուտ, երբ
դեռ ինքը քնած է, հայրիկը կտուր է բարձրանում, ու
հենց որ ծաղում է արևը, հավաքում է նրա առաջին
շողերը և ըերում, շաղ տալիս կտավի վրա: Երբ մի քիչ
մեծացավ, սկսեց կառկածել: Իսկ հիմա արդեն միամիտ
չէ ու այնքան բան դիտի:

Մի ժամանակ երկար նստում էր հայրիկի կողքին
ու նայում վրձինի հարվածներին, ուշադիր հետեւում, թե
ինչպես են անկանոն, ծուռտիկ գծերը միանում, դառ-
նում գանդրահեր մի ծառ, կամ ահագին մի անխվ, կամ
թե ժամացող մի դեմք: Հետո ինքն էլ սկսեց նկարել
ու մայրիկին ցույց տալ: Առ շատ դովեց կարոյին և
կարոն որոշեց անպայման նկարիչ դառնալ: Իրենց դըպ-
րոցի շենքը նա մի շնչով կնկարի ու կներկի: Այնպիսի
աքաղաղ է նկարում՝ կարմրակատար, ծուղրուղու կան-
չելիս: Իսկ աղվեսները՝ խորամանկ, խորամանկ: Իրենց
պիոներական ջոկատի պատի թերթի ճակատն ինքն է
նկարում ու մի գլխատառ Ա: Է զրում, որ կզարմանա:

Բայց հայրիկին չի հասնի: Դե նա անվանի
նկարիչ է, կոչում ու շքանշան ունի: Այս մարդ այսպիսի
հայրիկ ունենա, չէ՞: Կարովի ընկերներն էլ են ճանա-
չում նկարչին: Աղատ ժամերին նրանք հավաքվում են

պիոներական սենյակը և կարոն նրանց պատմում է հայրիկի արվեստանոցի ու նկարների մասին։ Խոսելիս Կառոյի դեմքը շիկնում է ու աչքերը փայլում են։

— Հայրիկս երեկ ավարտեց «Խաղողի բերքահավաքը», — ասում է նա զեկուցողի պես հանդիսավոր, — որ տեսնեք՝ ի՞նչ խաղող է, ի՞նչքա՞ն շատ ու քաղցր։

Երբեմն էլ ընկերներին տանում է հայրիկի արվեստանոցը։

— Սա՝ «Հունձն» է, — բացարում է նա ցույց տալով մի մեծ կտավ, — առաջին անգամ կոմքայնով հունձն անում, ու անբողջ գյուղը հավաքվել է նայելու։ Երեխաները ոլխիկոնծի են տալիս, իսկ էս պալիկն էլ ուրախությունից լաց է լինում։

— Սա էլ՝ «Գյուղի առավոտն է»։

— Իսկ սա՝ «Ելեկտրակայանի շինարարությունը... Հայրիկը շատ է սիրում Կարոյին ու հենց որ մի նոր նկար է ուղարձ սկսել, նախ նրա հետ է խոսում։

— Կարո ջան, արի, էսպիսի բան նկարենք, — Ժպանով ասում է նա, ու Կարոն ուրախ ծափ է տալիս։

— Նկարենք, նկարենք, հայրիկ, — աղմկում է նա, Ու նկարում են։ Այսինքն հայրիկը նկարում է, իսկ Կարոն նրա կողքին կանգնած շատախոսում։

Մի անգամ հայր ու որդի որոշեցին նկարել բանակից վերադասի հերոս զինվորի հանդիպումն իր կնոջ հետ։ Բանակի տոնի առթիվ ցուցահանդես էր բացվելու, և նկարը պիտի ցուցադրվեր այնտեղ։ Հայրիկը նկարում էր, իսկ Կարոն ընկերներին պատմում։

— Հայրիկը մի նոր գործ է սկսել ցուցահանդեսի համար... Այ, կտեսնեք՝ ի՞նչ է լինելու, ի՞նչպիսի հերոս է դուրս գալու։ հենց միայն դեմքին նախեք, կասեք՝ սա

թշնամու հարյուր զինվոր է սպանել ու հիսուն էլ տանկ
է աչքել...

—Պա՛հ, —զարմանքից հազիվ չեխ ճշում ընկերները:
Բայց ահա ցուցահանդեսի բացման օրերը մոտենում
էին, իսկ նկարը չեր ավարտվում: Հայրիկը համարյա
զիշեր ցերեկ դուրս չեր գալիս արվեստանոցից, մռայլ-
վել էր, առաջվա պես կատակներ չեր անում: «Զի ստաց-
վում... չի ստացվում...», —ինքն իրեն փնթվնթում էր
հայրիկը, և Կարոն վախենում էր ու անհանգստանում, —
իսկ եթե հանկարծ ցուցահանդեսին չհասնի...

Ինչու էր հայրիկը հուզվել և ի՞նչը չեր ստացվում:
Կարոն հայրիկից թաքուն նայում էր կտավին. թշնամու
բազմաթիվ տանկեր ալրող Հերոսը հենց նոր էր իջել
ձիուց ու գրկել կնոջը. փոքրիկ Սուրբիկը (Կարոն հաստատ-
գիտի, որ ալգալես է Հերոսի որդու տնունը) բռնել է
մալրիկի փեշից ու թուչկոտում է: Վերջալույսի շողերի
մեջ վառվում է նրա գլուխը: Կինը կարծես երազում
լինի ու չի հավատում ոչ աչքերին, ոչ ձեռներին: Զին
էլ դունչը դրել է տիրոջ ուսին: Ամեն ինչ այնպես լավ
է, այնպես լուսավոր, իսկ հայրիկը դժգոհ է... ցուցա-
հանդեսն էլ մոտենում է...

* * *

Մի օր՝ էլ զլուղից նրանց մոտ հյուր եկան
մորաքույրը և նրա տղան՝ Արտոն: Կարոն շատ էր սի-
րում Արտոյին ու շատ ուրախացավ: Անցյալ տարի ամառը
նրանք ինչքան են լողացել գետում ու թափարիկել ավազ-
ների վրա: Ամեն ամառ Կարոն նրանց դյուղն է դնում
ու կարմրած, սկացած ետ գալիս: Արտոն էլ Կարոյին
է շատ սիրում: Ամեն անգամ քաղաք գալիս միասին
են Պիոներական պալատ գնում, միասին են կինոյից

Երգել սովորում։ Ժիր, աչքաբաց տղա է Արտոն, բոլոր
առարկաներից հինգ ունի, ափսոս նկարել չդիտե։ Բայց
դա չի խանգարում, որ Կարսն նըրան սիրի ու հայրիկի
նկարները ցույց տա։ Այսօր էլ Կարոն ընկերոջը տարավ
հայրիկի արվեստանոցը։ Կանգնում էին պատից կտիւ-
ված մեծ ու վորքը կտավների առաջ և Կարոն բացա-
տրում էր ամեն մեկի մասին։ Արտոն էլ աչքերը շուր-
աբած՝ նախում էր ու չէր կարողանում զսպել իրեն։

— Վա՛յ, էս հո մեր կալսիչ մեքենան է...

— Էս էլ՝ մեր սարը, Կարոն, չե՞ս հիշում։

— Այ, էս էլ մեր աղբյուրը, էս էլ՝ մեր արտերը...—
մերթ ընդ մերթ բացագանձում էր նա։ Կարոն լսում էր
ու ժպտում, իսկ մտքում ասում էր՝ «իմ լավ, իու միա-
միւտ Արտոն»։

Երբ հասան «Հերոսի վերադարձը» նկարին, Կարոն
մոալլվեց։ Հայրիկը մի քիչ հեռու նստած տխուր ծխուռ
էր։ Նա համարյա չէր էլ նկատել տղաներին։ Կարոն ու-
զում էր բացատրել թե ով է ահա ձիուց իջած այս
զինվորն ու էլի շատ բան, բայց նայելով հորը՝ լոեց։
Վախենում էր բարկացնի։ Ախը նկարը դեռ չէր ավարտ-
վել... իսկ Արտոն կանգնել է ու չի հեռանում։ Կարոն
բաշում է նըր թեից, իսկ նա կարծես մեխաված լինի։

— Բա Ճերմակն ուր է, — հանկարծ հարցեց Ար-
տոն՝ ճեռքը մեկնելով նկարի կողմը։

— Ի՞նչ Ճերմակ, — զարմացավ Կարոն։

— Ի՞նչ Ճերմակ, — կարծես երազի մեջ նըրանց ձայնը
լսելով հարցրեց նկարիչը և ժուեցավ տղաներին։

— Աղավնին, է՛լի... մեր Ճերմակը... Ես հիշում եմ,
Երբ հայրիկս բանակից վերադարձել էր, և ես ու մայ-
րիկը նըրան դիմավորում էինք, իմ աղավնին էլ
էր եկել և ուրախությունից ինչպես էր օդում ճախրում,

գլխիկոնծի տալիս, մեկ իմ ուսին էր նստում, մեկ հայ-
րիկի...

Կարսն չտեսավ, թե ինչպես հանկարծ փայլեցին
հայբիկի աչքերը:

— Գտա, դտա, — շնչաց նա ու մոտենալով Արտո-
յին զբկեց, համբուրեց...

* * *

Երկու օր հետո ռէերոսի վերադարձը ավարտված
էր և տանում էին ցուցահանդես:

Ահա թե սա էլ ինչպիսի պատճություն է:



ՎԵՃ

Մայրը սեղանատան մի անկյունում տոնածառ
սարքեց Գարիկի ու Գոհարիկի համար և լավ զարդարեց:
Նրանք էլ հավաքեցին իրենց ընկերներին, որ տոնածառ
խաղան: Եկան Աշխենը, Վահանը, Սուրիկը, Նվարդը ու
Էլի շատերը: Եվ երգեցին, պարեցին, ուրախացոն: Ամե-
նից շատ ծիծաղեցին Զմեռ պապիկ վրա: Մի տեսեք՝
ո՞նց է կանգնել ահազին, ճերմակ մորուքով, երկար ձեռ-
նափայոը ձեռքին: Կանգնել է լուռ, ձայն-ծպոռն չի
հանում: Մի խոսքով՝ խեկան Զմեռ պապի:

Երբ շատ էին պարել ու երգել, Գարիկը «սուս»
արավ, ձեռքը բարձրացրեց, ինչպես ընկեր Արամյանն
է անում դասի ժամանակ, և տսաց.

— Եկեք, հիմի էլ պատմություններ անենք:
Գիտե՞ք, որ այս Գարիկը հայտնի է որպես լավ պատ-
մություններ անող: Գրքերումն է կարդում, տատիկից
ու մայրիկից է լսում, մի բան էլ ինչն է հորինում ու
պատմում է, ինչպես է պատմում: Եթե հեքիաթի աղվեսը
երկու պոչ է ունենում, Գարիկն էլ իր կողմից հինգն
է ավելացնում ու յոթ պոչանի աղվեսին, — ծիծաղելի է,
չէ՞,—ման է ածում ամբողջ պատմության մեջ: Կամ թե՝
լուիլ եք, որ դաԱը պողեր ունենա, իսկ Գարիկի դաԱը
ունի: Ու ինչպես է խաբս տալիս այծելին, պողահարում...
Սհա թե ինչու երբ շատ էին երգել ու պարել, Գարիկն
տսաց.

— Եկեք, հիմի էլ պատմություններ անենք:

— Եկեք, եկեք, — վրա տվին բոլորը:

— Տեսնում եք մեր էս Զմեռ պապիկն, — ասաց
Գարիկը, — այնքան բան գիտի, այնպիսի պատմություններ՝ ու զբուցներ։ Ավասոս չի ուղում պատմել։ Եկեք
ամեն անդամ մեկս խոսի նրա վոխարեն ու նրա պատ-
մությունն անի։ Լավ։

— Լավ, լավ, — ասացին այս ու այն կողմից։

— Ում պատմածն ամենից շատ զարմանալի եղավ,
նու էլ կհաղթի, — բացարեց Գարիկը։

— Այն, այն, — ուրախ հաստատեցին բոլորը։
Լավ խաղ է, չէ՞։ Թող նրանք պատմեն, իսկ մենք
էլ լսենք ու եթե տեղը գա՞ զարմանանք։

Առաջինը նվարդն սկսեց։ Նա պատմեց, թե ինչպես
ինքը (այսինքն Զմեռ պապին) չէ որ նա խոսում է
Զմեռ պապիի վոխարեն) տեսել է նապաստակի ու գայ-
իի կոիվը։ Գայլը եկել կանգնել է նապաստակի դռանն
ու ձայն է տալիս. «Դուքս եկ, հեյ, հինգ օր է ոչինչ
չեմ կերել ու քաղցած եմ, քեզ պիտի ուտեմ»։ Իսկ նա-
պաստակը դուքս չի զալիս։ «Կորիլ, աղան, ձրիակե՛ր, —
ասում է, — ես էլ եմ ապրել ուզում»։ Գայլը չի համբե-
րում, իրեն զցում է ներս ու հենց որ բերանը բաց է
անում, նապաստակը մտնում է նրա կոկորդը։ Մտնում
է ու հենց կոկորդումն էլ նստում, ոչ ներս է գնում,
ոչ դուքս զալիս։ Գայլն սկսում է խեղղվել, արցունք
է թափում, աղաչում-պաղատում է. «Դուքս արի, ասում
է, հաշտվում եմ ձեր ցեղի հետ ու կտակ եմ անում, որ
մեր երկու ցեղերը բարեկամ դառնան»։ Բայց քաջ նա-
պաստակը՝ «Չէ՛ որ չէ, դուքս չեմ գա, մինչեւ որ խեղղվես»։ Ու դայլին խեղղում է...»

— Ի՞նչ լավ է անում, այ թե քաջն է եղել, — ասա-
ցին սողմիկները ծափ տալով։

— Ի՞նչ զարմանալի է, որ նապաստակը դայլին

հաղթում է,— ասացին տղաները։ Իսկ Գարիկը ձեռքը
թափ տվեց։

— Զարմանալի բան չկա, — ասաց նա, — պատահում
է, որ մըջյունն էլ է մտնում արջի կոկորդն ու խեղդում
նըան։

Սուրիկի պատմածն էլ այսպես էր. — Չմեռ պապին
իբր թե սավառնակ է նստել ու թուշ-հասել է լուսնին,
իսկ վերադարձին իր հետ բերել էր ահա այս երկար
ճոնի ձեռնափայտը։

— Պահ, — ասացին մի քանիսը և ծափ տվեն։
Գարիկը դարձյալ առարկեց։

— Լուսնի վրա վայտ չկա ու զարմանալի էլ չէ, —
կտրուկ ասաց նա։

Հետո Աշխենն ու Վահանիկը պատմեցին, ու նըանց
պատմածներն էլ Գարիկը նորություն ու զարմանալի
չհամարեց։ Այսուել Գոհարիկն այլիս չհամբերեց, բար-
կացավ եղբոր վրա։

— Հիմի քեզ էլ կտեսնենք, — ասաց նա։

— Կտեսնենք, — հպարտ վրա տվեց Գարիկը։
Բույր ու եղբայր միշտ վիճում են իրար հետ ու
Գոհարիկն ամեն անզամ բո՞նում է եղբոր հնարածները։
Մի անգամ, մալրիկը չլիներ, բանը կովով կվերջանար։
Գարիկը պատմում էր, թե զրուցյի կորիճ աղան ինչպես
հաղթեց յոթ զլիսանի դեմ։ — Տղան նստեց մոտոցիկլու,՝
ձեռքն առավ կատյուշան ու...

— Այն ժամանակ ոչ մոտոցիկլետ կար և ոչ էլ կտ-
տյուշա, — առարկեց Գոհարիկը։ Բայց այդ դուր չեկատ
տղային։ — Կար, — ասաց նա։ — Չկար, — պնդեց քույրը։
— Կար, չկար, կար, չկար... — բանն, ասում եմ, վատ կվերջա-
նար, եթե մայրիկը վրա չհասներ։

Բայց իսկույն էլ հաշտվում են, Գոհարիկը վախթ-

վում-համբուրում է եղբարը, իսկ Գարիկը ծիծառում է արտասվելու չափ:

Գարիկն այսօր ուզում էր այնպիսի մի բան սկսամել, որ քույրը ոչինչ չդժոնի ասելու, և բոլորին էլ զարմացնի: Նա նստեց փոքրիկ տթոռին, Զմեու պապիկի կողքին ու ահա թե ինչ պատմեց.

— Մի տարի մեր գյուղացիներից մեկը կարտոֆիլ տնկեց, մի հրաշք բան. մարդկանց աչքի առաջ ժամ առ ժամ՝ աճում էր: Մի շաբաթվա մեջ ցողունը մինչև Մարսը հասավ, իսկ պալարը դարձավ Փոքր Մասիսի չափ: Մի ամիս հետո արդեն Մեծ Մասիսի չափ էր՝ կլոր-կլոր: Արմատներն էլ ձգվեցին, անցան Զանգուի վրայով՝ սնց որ կամուրջ: Զորք, ձիավոր, մեքենա անցնում էին այդ կամուրջի վրաինք...

— Պահ, այդքան էլ ո՞եծ կարտոֆիլ:

— Այս, թե զարմանալի պատմություն...

— Այս, քեզ հրաշք...— բացազանչեցին այս ու այն կողմից:

Միայն Գոհարիկն էր լուս:

— Ես դրանից ավելի զարմանալի բան դիտեմ,— ասաց նա:

Բոլորը լոեցին, իսկ Գարիկը շիոթված նայեց քըռջը:

— Ասո՞ւ, — խեթեց աղան:

— Կասեմ, — սկսեց քույրը: — Այդ մեծ կարտոֆիլի տարին դարբին հորեղբայրս մի մեծ կաթսա պատրաստեց, այնքան մեծ, որ աշխարհի բոլոր ձիավորները կարող էին ջիրիդ խաղալ մեջը...

— Սուտ է, — շղիմացավ Գարիկը, — ով է աեսել էղպիսի մեծ կաթսա ու ինչի՞ համար է...

— Նրա համար, — հանգիստ պատասխանեց Գոհարիկը, — որ քո կարտոֆիլը եփեն մեջը, խելո՛ք...

— Իհարկե, իհարկե, այ թե պատասխանեց, — ասացին մի քանիսը ու ծափահարեցին:

— Ու չես էլ զարմացնի քո կարտոֆիլներով, — ավելացրեց Գոհարիկը ձայնը բարձրացնելով, — թե քոնը հնարովի է, մենք մեր դպրոցի բակում միշուրինյան այնպիսի խնձորներ ենք աճեցնելու, որ դու քո հերիաթներում էլ չես լսել նրանց մասին, բա՛...

— Իհարկե, իհարկե, ինչ լավ կլինի ու ինչ դարձանալի է... — վրա տվին ըոլոքը:

Գարիկը քըտնած, կարմրած՝ իրեն դուրս նետեց, որ մի նոր պատմություն գտնի: Քիչ հետո նա վերադավ, հաշտվեց քրոջ հետ, համբուրվեցին ու սկսեցին երգել, պարել տոնածառի շուրջը: Նրանք երգեցին, պարեցին, ուրախացան, ու այս պատմությունն էլ վերջացավ:



ՍԵՄՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ

Տանն ամենից շուտ վահանիկն արթնացավ, նստեց
անկողնում ու աչքերը տրորեց: «Բոլորը քնած են...
ինչպես կարելի է... նույնիսկ տառին է խոմփացնում...
իսկ որ հիմա զանգը տան...», մտածեց Վահանիկը:

— Մամա, տառի, — շնչաց նա:

Զայն չկար: Էսվուճ էր միայն տառի ֆսոսը:
Վահանիկն սկսեց հաղնվել: Ամբողջ ամառը նա սպասում
էր այդ օրվան: Գիշերն էլ հանգիստ չընեց: Մի քանի
անգամ երազ տեսավ, իբր թե ուշանում է դպրոցից, իսկ
մայրիկը նեղանում է. «Ի՞նչպես կարելի է, Վահանիկ»:

— Վահանիկ...

— Տառի, տառի շան, — ճչաց տղան, — այ, ես առ-
դեն շորերս հաղել եմ... ախր հիմա զանգը կտան...

Մայրն ու տառը երկար զբաղվեցին Վահանիկին
ճանապարհ դնելով: Նախորդ օրը մայրիկը նոր ֆրենջ էր
դնել տղային, փայլեցրել էր կոշիկները, կաշվե սիրուն
պայուսակի մեջ դասավորել Վահանիկի մանկապարտեզի-
տետրակներն ու մատիտները, նկարազարդ գրքերը:

— Շուտ, մամա, ուշանում եմ, — ասում էր Վահանիկը.
Նեղսրտելով մոր վրա, որն այսօր հակառակի պես դան-
դաղ էր շարժվում, կարծես իրեն ջղրացնելու համար:
Կողքի սենյակի բաց դռնից նա նայում էր քրոջն ու
եղբորը, որոնք նոր էին զարթնել ու զրուցուած էին այն-
պես հանգիստ, ինչպես երազում: «Ի՞նչպես կարելի է...»,
— զարմանում էր տղան: Նա զարժանքով էր նայում

լուսամուտի դողին պառկած բրդոտ կատվին, որ աչքերը
փակ մոռում էր, թովով շանը, որ անհոգ ներս ու
դուրս էր անում, քսմսվում էր իր ոտքերին ու ջղայ-
նացնում: Ինչպես չեն իմանում, որ հիմա ուր որ է
զանգը կտան, ուսուցչուհին կմտնի... «Խակ որ ուշանամ,
դիտես ինչ կլինի...» — մտածում էր Վահանիկը չկարողա-
նալով բացատրել, թե ինչ կլինի ի, եթե ուշանա:

Փողոցում ամեն ինչ այսօր փոխված էր նրա աչքին:
Տսերը մեծացել ու երկարել էին, ծառերը նոր գույն
ստացել, արևն էլ այնպես լավ էր լուսավորում, ինչպես
տոներին է լինում: Զարմանալի էր միայն, որ մարդիկ
անցնում-դառնում են լուս ու դանդաղ, կարծես՝ ոչինչ
չի պատահել աշխարհում ու նրանց համար դեռ չի եկել
սեպտեմբերի առավոտը... Ինչքան էլ Վահանիկն ականջ
էր դնում, ոչ մեկը դպրոցի մասին չէր խոսում: «Ուր
են գնում նրանք, — մտածում էր տղան, — չե՞ որ դպրոցի
ճական, այ, էս վողոցով է... հետո ծովում է վեր ու
դեպի ձախ... Բարեկենաց տան մոտով... խակ սրանք ուր
են գնում... կուշանան, այ, կուշանան ու այն ժամանակ
ինչ վատ կլինի... ուսուցչուհին կբարկանա՝ ինչպես կա-
րելի է... Մարդ իմանա, թե ուր է դսում էն պային
ձեռնախայտը քստքստացնելով, էն ակնոցավոր մարդը,
այս կարճիկ մորաքույրը... խակ, այ, նրանք էլ դնդակ
են խաղում... ծույլերը... կարծում եք՝ ես չունեմ... եր-
կուսն ունեմ: Խակ խաղալ չե՛ կարելի: Այսօր սեպտեմ-
բերի մեկն է...»

Հանկարծ հիշեց դիշերվա երազն ու վախեցավ. սկը-
սեց վաղ տախ, բայց տեսնելով, որ ոչ ոք չի վազում
դանդաղեց: Ո՞վ է լինելու մեր ուսուցչուհին, մտածեց
Վահանիկը: Լավը, շատ լավն է լինելու, և ես շատ եմ սի-
րելու նրան: Ամեն օր նրա մասին պատմելու եմ մայ-

Քեկին, ինչպես Անիկն է սպատմում։ Իսկ մերն ավելի
լավն է, ավելի բարի, քան Անիկենց ուսուցչուհին։ Նրա
համար նվեր եմ առնելու, իսկ եթե ինձ նման տղա ու-
նենա՞ մի գնդակ կտամ նրան։

Կապույտ շրջազգեստ հագած ակնոցավոր մի կին
շտապ անցնում էր Վահանիկի մոտով։ «Զինի՞ ոա է», —
ուրախ մտածեց Վահանիկն ու այն է՝ պիտի վաղ տար,
հասներ նրան և, ինչպես մայրիկն էր սովորեցրել, ասեր՝
բարե ձեզ.. բայց ամաչեց։ Իսկ եթե նո չլիներ... Զէ՛,
անպայման նա է, ու ակնոցներ էլ ունի. շատ զրքեր է
կարգացել, հա, աշխարհի բոլոր գրքերը... բայց ուր է
գնում նա, դպրոցն, այ, մյուս կողմն է... գուցե սխալ-
վեց, ձայն չտամ...»

Վահանիկը վաղ տվեց, բայց ակնոցավոր կինն ար-
դեն մտել էր բակերից մեկը։ «Զէ, նա չէր», ախուր-
մտածեց տղան ու առաջ անցավ։

Դպրոցի բակում խաղաղ էր. զանգի ձայն էլ չէր
լսվում. Վահանիկը նայում էր բարձր, ոիրուն շենքին,
չորս կողմն էր նայում ու զարմանում էր, թե մի գի-
շերվա մեջ ինչպես է փոխվել ամեն ինչ։ Մուտքի մեծ
դռան մոտ նրան դիմավորեց ծեր պահակը։

— Բա՛րե, ոլապի, — ասաց Վահանիկը։

— Բարով, լավ բալիկ, բոլորից քաջն ես, հա, — ասաց
ծերունին Վահանիկին ներս թողնելով։ «Ինչ լավ պա-
պիկ է ու ինչ շուտ է զարթնել... քոջ ես, ասում է,
դե աշակերտ եմ, չէ՞...», — մտածում էր Վահանիկը մի-
ջանցըով անցնելով։

...Մեծ, լուսավոր դասարանում իր նման շատ տղա-
ների հետ նստել է Վահանիկն ու սպասում է ուսուցչու-
հուն։ Նրա կողքին նստել է խուճուճ մազերով մի տղաւ
«Ի՞նչ կինի որա անունը, — մտածում է, Վահանիկը. —

ինչքան ընկերներ կունենամ... բոլորին էլ կսիրեմ ու
միասին կգնանք մեր պարտեզ... հետո լողալու կգնանք...
իսկ ամենից շատ որան կսիրեմ... տեսնես՝ սա էլ գու-
նավոր մատիտ կունենամ, դնդակ կունենամ, քանոն, գլո-
չաման...»:

— Դու նկար ունես, — հարցնում է խուճուձ մաղե-
րով տղան, — իսկ ես շատ ունեմ, կարող է՝ հազար հատ:
Այ, սա ընկեր Ստալինն է, սա՝ Վոլոշիլովը, սա գեներալ
Բաղրամյանը... սա էլ Նելսոն Ստեփանյանը... սա էլ...

Նա պայտասակից մեկ-մեկ հանում է նկարներն ու
ցույց տալիս Վահանիկին: Վահանիկը նայում է նկար-
ներին ու տիրում է, քիչ է մնում՝ լաց լինի, ինչպես է,
որ ինքը չի մտածել նկարներ ունենալու մասին,,, էլ
ինչ աշակերտ է, որ նկար էլ չունենա...»

— Գիտե՞ս՝ ով է Նելսոն Ստեփանյանը, — մեծավարի
հարցնում է խուճուձը, — նա մեծ, ամպի չափ մեծ հերոս է
ու ծովի վրա էլ քայլում է Ենակես, ինչպես գետնի վրա...»

Դասարանը հանկարծ խաղաղվեց, անց ու դարձը
դադարեց: Վահանիկը խոսքով ընկած չէր նկատել, թե
ինչպես էր ուսուցչուհին ներս մտել: Նա կանոնել էր
գրասեղանի առաջ, ու Վահանիկին թվաց, թե իրեն է
նայում: Միջահասակ, մայրիկի աչքերի նման մեծ ու
բարի աչքերով մի կին էր ուսուցչուհին: Նա ավելի լավին
էր երեսմ, քան Վահանիկն էր մտածում նրա մասին:
Ու ամեն ինչ այնպես լավ էր, որ Վահանիկին թվում էր,
թե երազումն է... Հենց այդ լավ երազի մեջ էլ հնչեց
ուսուցչուհու ձայնը.

— Դասն սկսենք, երեխաներ...

ՄԻ ԾԱՌԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դիտեք, որ մարդու պես ծառն էլ, —ու ամեն մի բույս
աշխարհում, —իր պատմությունն ունի։ Միայն թե նա լե-
զու չունի, որ պատմի, գրել չգիտէ, որ գրի իր մասին։
Այս եթե մի հրաշքով լեզու առներ ահա այս խնձորե-
նին, որի ստիերի տակ հանգստանում է հայրենի երկիրն
ուսումնասիրող ձեր ջոկատը։ Դուք կնստեիք թարմ կա-
նաչի գորգին, այս շատախոս առվակի ափին, ճամփոր-
դական պայուսակներից կհանեիք ձեր հուշատետրերը,
իսկ խնձորենին կսկսեր։

* * *

«Այս գարնանը լրացավ իմ տասներկու տարին։ իսկ
ես հիշում եմ իմ կյանքի բոլոր տարիներն ու դեպքերը
այն օրվանից, երբ ինձ տնկեց պիոներ Արտոն Շատ-
րավ տղա էր Արտոն։ Ժիր, ուրախ ու սիրելի։ ես նրան
հիմա էլ շատ եմ սիառւ։ Ասենք՝ նա էլ չի մոռացել ինձ
ու ամեն անգամ կողքովս անցնելիս շոյում է բունս ու
շշնջում։

— Ծաղկել ես, սիրելի՛ս, լավի՛կս . . .

Ի՞նչ օրեր ենք անց կացրել նրա հետ։ Երբ նա ինձ
տնկեց, վաղ գարուն էր ու ցուրտ։ Սարերից փչում էր
սառը, ձնախառն քային։ Արև չկար, ամրող օրը ամ-
պամած էր ու մոայլ, ես էլ դե բարակ ու նուրբ մի
շիվ՝ դողում էի ամբողջ մարմնով։ «Կսառչեմ այս հողում,
չեմ ապրի, չէ», մտածում էի տխուր։ Լավ էր, որ մենակ
չէի։ Արտոյի ջոկատը գարնանային արձակուրդներին
արշավ էր կողմակերպել դեպի հարավ և վերապարձին

իր հետ բերել Զրաշառի կոլխողի նվիրած հարյուրի
չափ ոլաղատու ծառերի անկիները։ Մեզ անկեցին դըպ-
րոցի ընդարձակ հողամասում, մի արևկող տեղ։ Ոչ ոք-
չէր հավատում, թե այս գյուղում, ուր առաջ կարդին
ուռենի էլ չկար, կարող է խնձորենի ծաղկել ու ոլուզ
տալ։ Հենց մենք էլ չեինք հավատում։ Դե հո գիտեք
թե ինչքան՝ այսք է մեղ մոտ՝ Զրաշառում, արևն էլ մոտիկ,
մոտիկ, ... իսկ այս սարալանջում, այս բուք ու ըորանի
տուաջ... «Կատոշեմ, չեմ ասլի, չէ՞»՝ մտածում էի ես։

Ճիշտ է, ամեն մեկս սիրում էր իր խնամակալին ու
միակ ուրախ բանը այդ էր, որ մեղ սիրու էր տալիս։ —
լավ տղաներ էին, շատ շնորհակալ ենք, ու ոչինչ չեին
խնայում, որ մենք մեղ լավ զգանք։ Արտոն ժամանակին
դույլով ջուր էր հասցնում, — այդ տարին դեռ առուն
էլ պատրաստ չէր, — արմատիս շուրջը փորում, փափկա-
ցընում, պարարսացնում էր, ցուրտ օրերին դիշերները
խոսով ծածկում, մի օր էլ իր հին փողկապը կապեց
ճրուղիցս ու տսաց, — «Զյունիկ, սիրելիս (չգիտեմ ինչու
նա ինձ ալդ անունով կոչեց), ահա դու արդեն պիոներ
ես ու էլ ոչ մի բանից չպետք է վախենաս, դու հո գի-
տես, որ պիոները քաջ ու տոկուն է լինում, չէ՞...»։
«Գիտեմ, դիտեմ, սիրելի Արտո, երբ ես դու չեի բա-
ժանվել իմ մայրիկից, նրա սովերի տակ քանի, քանի
անդամ հավաքույթներ են եղել, ու ինչքան բան եմ լը-
սել պիոներների մասին, Միջուրինի մասին... Բայց դե-
ինչպես դիմանած այս սառնամանիքում, երբ ապրիլի
կեսերին էլ դեռ մեկ-մեկ ձյուն է գալիս, քամին ոռնում
է չար սուլոցով, կամ թե մեկ էլ տեսար՝ կարկուտը ծե-
ծեց...», մտածում էի ես զլխահակ։ Մի խոսքով դժվար
ժամանակներ էին, Մի կողմից էլ հողն էր անծանոթ
ու խորթ։ Արմատներս նոր-նոր սկսել են մաղակալել,

ծարավում եմ, ջուր եմ ուղում՝ չի տալիս, սնունդ՝ չի տալիս:

— Դու ո՞վ ես որ, ես քեզ նման բույս չեմ տեսել ու չեմ ճանաչում:

Օդ անդամ կարգին չեմ շնչում, քիչ է մնում խեղղվեմ:

Իսկ Արտոն ամեն առավոտ դասերից առաջ դալիս էր ինձ ուստ, նայում էր, թե ըողբաշներ չկան գեռ, իսկ իրեն ինչոր ըան էր խոսում ու դնում: Երան աեսնելով ես ամեն ինչ մոսանում էի՝ և՛ ցուրտ, և՛ քաղց, և ամեն ինչ: Ու տսում էի ինքս ինձ՝ դիմացիր, Զյունիկ, էս է լավ օրեր են դալու, չե՞ որ դու պիոներ ես...

Գյուղացիներն էլ մի գլուխ ծիծաղում էին մեղվրա: Ենպիսի բաներ էին տսում, քիչ էր մնում լեղաճաք լինեինք: Ամենից շատ խոսում էր մի կարճվիկ, հասա ոտքելով ու ձեռքերով, կեպին մինչև աչքերը քաշած զյուղացի՝ Վանո անունով: Աա ժամերով չեր հեռանում մեղանից ու այնպիսի չարությամբ էր ծիծաղում, որ ամբողջ մարմնով գողում էի. «Հա թող հունվարի բորյազը վղացնի, տես ո՞նց է էղ խեղճերի արմատը երկինք հանում... Ո՞նց չէ, էս քար ու քոլում խնձորն ու սաւրն էին պակաս... Այ թե իր ասածի մարդուն թակելու ճիպոտներ են սրանք..., տսում էր նա ամեն անգամ:

Բայց քանի գնում՝ հողը տաքանում էր, անձրեները դադարում էին, իսկ ամառը աչքներս կարգին բաց արինք: Այնպէս տաք էր, հաճելի: Հողն էլ էր ընտելանում ու էլ չէր տսում. — «Ես քեզ նման բույս չեմ տեսել ու չեմ ճանաչում...»: Հիմա արդեն սնունդն առատ էր, ջուրն էլ Արտոն ժամանակին հասցնում էր: Ես ինձ ավելի լավ էի զգում, քան իրը հարավում, մայրիկիս մոտ էի:

Ճյուղերս սկսեցին կանաչել ու փոքրիկ, սիրունիկ տերեննը տալ, մի տեսնեիք Արտոյի ուրախությունը: Նա համարյա ինձանից չէր հեռանում. դասերն էլ սերտում էր իմ կողքը նստած ու ճանճ էլ չէր թողնում ինձ վրա նստի: Գյուղացիներն էլ էին զարմացել, որ մենք կանաչել, տերևներ ենք տվել: Դա ոի տեսակ հրաշքի պես էր: Ամենից շատ անհանգստացել էր Վանոն, Էլի գալիս էր, ժամերով նայում, հետեւում, թե պիոներներն ինչպես են լանտուռն մեղ, գլուխն օրորում էր, բայց էլի չէր կոտրվում. — Եղ ոչինչ, — ասում էր, — թող մի Սարալանջի հունվարը դա...»

Եվ եկավ...

Հիմա էլ մարմինս դող է ընկնում, երբ հիշում եմ այդ առաջին հունվարը: Ի՞նչ սարսափելի օրեր էին: Շնորհակալ եմ Արտոյից, Ճյունով ծածկել էր ինձ, բայց լեռնային ցուրտն էլի թրի պես կտրում-անցնում էր մարմնով: Լավ էր, որ շուտով ուշագնաց եղա ու չելի զգում, թե ինչ է կատարվում ինձ հետ: Շատերը կարծում էին, թե արդեն չորացել-ուենել եմ: Արտոն պատմում էր ընկերներին, թե Վանոն ինչպես էր ծաղրում իրեն: «Հը, Արտո, էս աշնանը ինձոր ուտելո՞ւ ենք, թե չէ, — ասում էր Վանոն, այ տղա, հյա մտիկ, ծառներիդ վրա հիմիկվանից սպիտակ խնձորներ են բռնել», — ու հաստիկ ձեռքը մեկնուի էր դեպի իմ ճյուղերից կախված սաղի լուլաները... Արտոն խեթ նայում էր Վանոյին ու ոչինչ չէր ասում: Մեր ընկերներից շատերը չղիմացան սառնամանիքին ու չորացան: Իսկ ես ուշըի եկա մարտի վերջերին: Մի տաք ու արևոտ առավոռ էր: Աշքերս բաց եմ անում ու խորր շնչում եմ թարմ օդը: «Էս ողտեղ եմ», — հարցնում եմ ինքս ինձ ու իսկույն էլ սկսում եմ ամեն ինչ մտաբերել: «Բարի լույս, Զյունիկ, — լսեցի

Ալոռյի սիրելի, այնպես կարոտած ձախը ու տեսա նրան
ուրախ ժաման դեմքին,—ինչպես ես, սիրելիս, չե՞ս մըր-
սել, լավիկա...», — ասում էր նա շոյելով իրանաւ ռկավ եմ,
շնորհակալ եմ, սիրելի բարեկամ», — ասացի ես, բայց
ափսոս, որ Արտոն չէր հասկանա...

Մյու գարնան ու ամռանն արդեն ահապին բոլ քաշե-
ցինք ու ճյուղքներս էլ շատացան: Ես ինքս էլ էի տեսնում
երկար, սիրուն ստվերս, որ ընկնում էր նոր պատրաս-
տած ցանկապատին: Զգիտեմ՝ ասացի, որ այդ ցանկա-
պատը պիոներներն էին պատրաստել մեզ պաշտպանելու
համար: Մի օր էլ, վաղ լուսաբացին էլի Վանոն եկավ ու
ցանկապատին հենվելով գլուխն է օրորում: Հիմի էլ ա-
ռաջվա նման քոծիծաղ չի տալիս: Դեմքի վըա էլ մի
տարօրինակ արտահայտություն կա՝ չգիտես զարմանքի,
յե՞ բարկության: Նայում է, նայում, նայում ու խորհր-
դավոր գլուխը շարժում: Իսկ երբ հեռվից երևաց Արտոն,
սա թողեց ու հեռացավ, որ նրան չտեսնի: Գուցե ամա-
չում էր մարդը, ով դիտե...: Ամառն այնպես պնդացա,
հողին էլ այնպես սովորեցի ու ընտելացա... Կարծես՝ պա-
պերս ու նրանց էլ պապերը հենց այս հող ու ջրում,
այս արևի տակ էին անցկացրել իրենց կյանքը: Հետե-
յալ ձևեռն արդեն այնքան էլ սարսափելի չէր: Ճիշտ է,
ցուրտ էր, ու բուքը քիչ էր մնում արմատահան անի
մեզ, բայց դիմանում էինք. Արտոն և իր ընկերներն
էլ պահում-խնամում էին հոգատար ծնողի պես:

Էսպես անցավ հինգ, թե վեց տարի: Ես արդեն կա-
տարյալ ծան էի դարձել, ու մյուսներն էլ ինձ նման:
Արտոն էլ էր շատ վոխվել, կոմերիտմիության մեջ էր
մտել ու դպրոցն էլ ավարտում էր այդ ամառը: Բայց
առաջվա նման սիրում էր ինձ ու չէր մոռանում: Շոգ
օրերին գալիս, պառկում էր իմ ստվերում, կանաչի վըա

ու ես հով էի անում նրա սիրուն, թուխ աչքունքին, մտքումս անվերջ համբուրում էի իմ լավ, աղնիվ բարեկամին, Մի բան էլ ասեմ՝ մեր մեջ մնա... Երբեմն էլ դալիս էր երեկոները, մայրամուտից հետո, Սիրանի հետ՝ երկար մազերով մի լավ աղջիկ էր նաև նստում էին ու զրուցում երկար, երկար:

Այդ ամառը ես շարունակ էն էի մտածում, որ ահա, ուր որ է առաջին բերքն եմ տալու կարմիր, հյութալի խնձորներ ու առաջինը նպիրելու եմ իմ խնամակալին ու բարեկամին՝ Արտոյին: Այնպես էի երազում այդ օրը, այնպես՝ պատմել շեմ կարող: Ի՞նչ դնձություն կլինի գյուղում՝ մտածում էի: Բայց մեկ էլ լսում եմ, որ պատերազմ է ծագել...

Շատերի հետ Արտոն էլ բանակ զնաց հայրենիքը պաշտպանելու, իմ քաջ, իմ բարեկար, դալար կենա բազուկդ ու ոտղ կոխած տեղը վարդեր կանաչեն, ինչքան եմ լաց եղել քո ետևից ու երազել քո մասին... Հապա Սիրանը: Բոլորից գաղտնինա իրեն դցում էր լնձմոտ, փաթաթվում էր ու համբուրում, համբուրում: — Զյունիկ, — շնչում էր նա աչքերն արցունքով լցված, — պոնե քո առաջին պտուղը վայերեր Արտոն... Բայց ոչինչ, սիրելիս, դու լավ բերք կտաս, իսկ ես ահա աշխատում եմ նրա փոխարեն: Թող նա կովի ու հաղթի թշնամուն... Ու կհաղթի, չե՞՞ զյունիկ...

— Իհարկե կհաղթի... իհարկե կհաղթի... — տերեներիս շըշյունով ասում էի ես նրան՝ սիրով ու քնքշությամբ օրորելով առաջին խնձորներս:

Այդ աշնանը այդին պտուղ տվեց, ու ամենից շատ՝ Պետք է տեսնեիք, թե ինչպիսի տեսարան էր այստեղ — ամբողջ գյուղն էր հավաքվել այդեկութի օրը: Մեր նշանավոր Վանոն էլ քիչ էր մնում խելքը թոցնիւ նա

մի գլուխ էն էր . կըկնում. «Էս ո՞նց պատահեց, հը», էս
ո՞նց պատահեց...»

Երբ խնձորներս քաղում էին, սիրաս ճմլվում էր, որ
Արտօն ներկա չէր: Ո՞րտեղ ես, իմ լավ, իմ սիրելի, ո՞ր-
տեղ ես... զո՞նե մի ակնֆարթ հայտնվելիք այստեղ, տես-
նելիք քո ձեռքով տնկած ու աճեցրած Զյունիկի առաջին
պառողը... Այս,—մտածում էի, —ինչու լեզու չունեմ, որ
մոտս կանչեի Արտօյի մայրիկին ու ասեի՝ «Մայրիկ, քա-
ղիք իմ խնձորներից ամենալավերը, ամենահոտավետները
և ուղարկիր նրան, իմ բարերարին՝ ու հայրենիքին պաշտ-
պանին...»: Չեք կալող երեակայել, թե որքան ուրախա-
ցա, երբ Արտովի մայրիկը նոտեցավ ինձ. «Արտոս,—ա-
սում է,—նամակ է դրել ճակատից ու իր խնձորենու բա-
րիցն է խնդրել...»: Այս, թանկադինս, նա այնտեղ էլ
այն հեռավոր վայրերումն էլ, չի մոռացել իր Զյունի-
կին...—քաղին, տան, մայրիկ, և ուղարկիր նրան, քո որ-
դուն ու մեր պաշտպանին... չէ՞ որ ես իմ կյանքը նրան ե՞լ
պարտական, —աղմկում եմ ես ինքս ինձ, բայց ի՞նչ օ-
գուտ, որ նա չի լսում, ու ոչ ոք չի լսում այս խոսքե-
րը.—ինչ վատ է, որ մենք լեզու չունենք, չէ՞...

Երկու տարի անց Սարալանջի կոլխողն ինքը զցեց
մի նոր, ընդարձակ այգի ու այգեպան էլ, դիտե՞ք ում
նշանակեցին՝ ապա թե կուահել կարողանաք... Վանոյին:
Ինչու եք ծիծաղում: Թե չեք հավատում՝ ինքներդ հար-
ցըրեք: Նա ինք էր խնդրել, որ իրեն կուրսեր ուղարկեն,
կուրսերում սովորել էր այգեգործություն ու հիմի ար-
դեն նշանավոր այգեպան է: Հարեան կոլխողներից նրա
մոտ են գալիս խորհուրդ հարցնելու: Անցյալ գարնանը
նա սիչուրինյան նոր սորտեր բերել տվեց ու հին ծա-
ռերին էլ պատվաստ արեց: Ինձ էլ է պատվաստ արել: Մի
տեսնեք ինչպիսի սիրով ու վարպետությամբ է ա-

նում իր գործը՝ Գիշեր ցերեկ այդուց չի հեռանում ու
ամեն մի ճյուղի համար հոգին կտա: Զէ՛, և իզուր էի
նրա մասին վատ բան մտածում, նա շատ բարի սիրտ
ունի: Ու ոչ մեկիս մտքով էլ չի անցնում հիշեցնել նրա
հին սպառնալիքները...

Արտոն էլ հաղթանակով ու շքանշանով վերադար-
ձավ կովից ու հիմա բրիդադիր է: Էլի է դալիս իմ ըստ-
վերի տակ հանգստանալու և ինչ տեսակ սլաններ ու
երազներ ասես, որ չունի Անցյալ օրը իմ շվաքի տակ
էլի էսպես պիոներական հավաք էր ու որոշվեց, ալ, էս մերկ
բլրակներն ու լեռները ծածկել դաշտավաշտպան ան-
տառներով: Արտոն ինքն է ղեկավարում էդ գործը. նրա
շափ ծառ ու կանաչ սիրող մարդ չի լինի:

Մեր դպրոցական ալղին էլի պիոներներն են խնա-
մում. այնպես լավ է նրանց հետ ալրել ու ծաղկել,
այնպես լավ... Այնպես կուղեի անուշ բուրժունքով ու
միջուրինյան խնձորներով լցնել նրանց ամեն մի քայ-
լավոխը, մեր մեծ ու սիրելի Հայրենիքը...»:

* * *

...Դեհ, ուրեմն իմացաք, որ մարդու սկս ծառն էլ—ու
ամեն մի բույս աշխարհում,—իր պատմութեաւնն ունի:
Միայն թե նա լեզու չունի, որ պատմի, գրել չգիտի, որ
գըի իր մասին:



ՎԱՂՎԱ ՀԵՐՈՍԸ

Վաշիկը մի անգամ հայրիկի հետ կինո գնացւ Ցուցադրում էին «Երիտասարդ գվարդիա» նկարը։ Վաշիկը շատ էր լսել պատանի հերոսներ Օլեգ Կոշկոյի, Սերգեյ Տյուլենինի, Ռևյանա Գրոմովայի, Ժորա Հարությունյանի և մյուսների մասին ու շատ էր սիրում նրանց։ Պիռներական իրենց ջոկատն էլ հենց կոչվում էր «Օլեգ Կոշկոյի անվան և առաջին ջոկատ»։ Իր մահճակալի վերեռում պատին շարքով սիրուն փակցրել էր հերոսների նկարները։

Կինոնկարում նա բոլորին ճանաչում էր հենց առաջին երեալով ու մեկ-մակ ցույց էր տալիս՝ «Հայրիկ, այ, Օլեգը... այն ակնոցավորն էլ Զեմնուխովն է... Սերգեյ Տյուլենինը, նաևիր, հայրիկ, Վալյայի հետ գնում են ֆաշիստների շտաբը հրդեհելու... Ռւյանան է, երկար մազերով... այն փոքրիկն էլ Տյուրկինն է»։

Հայրը ժպտում էր ու շոցում տղայի դանդուրները։ Երբ կինոնկարը վերջացավ ու դահլիճը լուսավորվեց, հայրը տեսավ, որ Վաշիկը լաց է լինում, ասաց։

— Հանգստացիր, բալիկ, պիոները լաց չի լինի...
— Ես լաց չեմ լինում, հայրիկ, — հեկեկալով ասում

էր Վաշիկը, — բարեկությունս այն վախեռոտի վրա եկավ... Ախ, մի ձեռս ընկներ... թե ես Օլեգի տեղը լինեի... Ի՞նչպես է, որ նա չի ճանաչում այդ նապաստակին... իսկ ես կճանաչեի, հայրիկ, աղնիվ պիոներական խոսք... հենց

աչքերից կճանաչել, որ նա վախկոտ է ու Գվարդիակի մեջ չէի ընդունի...

Երբ սուն հասան, նա մայրիկին ու քրոջը՝ Վարդուհուն երկար, երկար պատմում էր գվարդիականների մասին։ Մեկ էլ պատմության ամենաթունդ տեղում տղայի աչքովս ընկավ ընկեր Ստալինի մեծ նկարը, որ հայրաբար ու հանգիստ նայում էր Վաչիկին։ Սա ոգևորված տեղից վեր թռավ։

—... Հա, գվարդիականների քաջության լուրը հասնում է Սոսկվա, Ստալինին, ու ընկեր Ստալինը Օլեգ Կոզմոջին իր մոտ է կանչում...

Մայրիկն ու Վարդուհին զարմացած նայեցին իրար. երկու օր ասած նրանք էլ էին դիակը նկարը ու այդպիսի բան չէին տեսել։ Իսկ Վաչիկը բարկացած շարունակեց։

— Դե ի՞նչ եք զարմանում, ես հո սուտ չե՞մ ասում, Ընկեր Ստալինը իր մոտ է կանչում Օլեգին, Ուլյանալին, Սերգեյին... Ու գրկում, համբուրում է... Դու չե՞ս հավատում, Վարդուհի, այ, մի անգամ էլ գնա՞ կտեսնես... հայրիկ, հայրիկ, դու ասա, ընկեր Ստալինը չհամբուրե՞ց գվարդիականներին... իսկ Վարդուհին չի հավատում... դե նա ինչ կինոնկար նայող է որ... Երեխ հենց կեսին էլ քնել է, չե՞... թե չե՞ ինչպես կարող էր ընկեր Ստալինը իր մոտ չկանչեր ու չհամբուրեր հերոսներին, չե՞ հայրիկ, ասա, չե՞...

Հայրիկը գրկեց տղային ու ասաց.

— Իհարկե, բալիկ ջան, Ստալինը նրանց համբուրում էր ու բոլոր հերոսներին էլ Ստալինը համբուրում է...
—

Առավատ շուտ Վաչիկը վեր կացավ ու վազեց հայ-
քիկի մոտ:

— Հայրիկ, դիշերը ես էլ էի գվարդիականների հետ
ու Օլեգին խնդրում էի, որ մի առաջադրանք էլ ինձ
տա...—ուրախ ու ծափ տալով պատժում էր նա:

— Եվ տվե՞ց,—ժալտաց հայրիկը:

— Չէր տալիս, փոքրիկ ես, ասում է, ուժի չի պա-
տի: Իսկ ես նրան՝ դե ի՞նչ ես ասում, ընկեր Օլեգ Կո-
շիոյ, ի՞նչպես թե ուժու չի պատի, չէ՞ որ ես պիոներ եմ՝
քո անվան ջոկատի անդամ ու երդվել եմ միշտ պատրաստ
լինել Լենինի-Ստալինի դործի պայքարին... Դե որ այդ-
պես է, ասում է, կդնաս, այ, այս ճանապարհով, կթաքնվես
թվերի մեջ... Աւ հենց որ այն գավաճանը անցնի, դու-
մայս ոռւմը ուղիղ նրա ճակատին... հետո ձեռքս սեղմեց
ու ասաց. — Պեհ, քեզ տեսնեմ, ընկեր գվարդիական Վա-
չիկ Ավագի վահանյան... Իսկ ես ուրախությունից լաց
եղա: Բայց, այ, էլի Վարդուհին մեջ ընկավ ու խանդա-
բեց, — բարկությունից Վաչիկի նոթերը կիտվեցին, — ե-
կել, կանգնել է կողքիս ու ասում է՝ ի՞նչ ես երեակայում,
ամ երազ է, հո իրականություն չի, ու դու մի սպազմե-
նա երիտասարդ Գվարդիայի մեջ լինելով:

— Ճիշտ եմ ասել, էլի, — իր մահմակալից ծղբառաց
Վարդուհին ինքն էլ վաղ տալով հայրիկի մոտ.

— Ի՞նչն ես ճիշտ ասել, — բորբոքվեց Վաչիկը, — ու-
րեմն ես չսկիսի՞ հերոս դառնամ...

— Երազում՝ ինչու չէ, — ծիծաղեց քույրը:

Վաչիկը բարկությունից ոտքը խփեց հատակին.

— Լոի՛ր, նախանձ, — ասում էր նա, — չէ՞ որ ես պիո-
նական ազնիվ խոսք եմ տվել գվարդիականներին..

— Խոսք ես տվել... հետո ինչ իսկ ֆաշիստներն էլ հուզկան: Ում դեմ ես կովելու, որ հերոս դառնաս...

— Կղառնամ, այ, կտեսնես, կղառնամ, ու ընկելը Ստալինն ինձ էլ կկանչի...

Այդ ժամանակ հայրիկը միջամատց.

— Իհարեւ կղառնաս, վաչիկ ջան, մեր հայրենիքում բոլորն էլ կարող են հերոս դառնալ: Ֆաշիստներ, ճիշտէ, չկան, նրանց վաղուց հաղթել ենք ու քշել մեր երկրից: Բայց հերոսոթյունը միայն ֆաշիստներից դեմ կը պետի չի ձեռք բերվում...

— Ես էլ այդ եմ տառմ, հայրիկ, — ուրախ ընդհատեց տղան:

— Այ, եթե լավ սովորես, կավարտես գլուցը, հետո կմտնես համալսարան կամ որևէ ինստիտուտ...

— Պոլիտեխնիկ ինստիտուտը, հայրիկ, — վրա բերեց վաչիկը:

— Թող լինի Պոլիտեխնիկ ինստիտուտը, — ժպտալով շաբունակեց հայրը, — կղառնաս նշանափառ ճարտարապետ, գեղեցիկ շենքեր ու գործարաններ կկառուցես, մեծ գործեր կանես հայրենիքի համար ու հայրենիքն էլ հերոսի կոչում կատ քեզ...

— Ռւռոա՞... — ծափ տվեց ապագա ճարտարապետը:

— ... Ընկեր Ստալինն էլ քեզ իր մոտ կկանչի, կը համբռըի, այ, արագես (հայրիկը համբռըց վաչիկի ճակատը) և կասի. — Ապրես Օլեգ Կոշեռյի անվան ջոկատի նախկին պիոներ վաչիկ Ավագի Վահանյան, գուքաչ ես ու լավ ես կատարել գվարդիականներին տված ազնիվ խոսքդ...



ԿԱՏԱԿ

Սենյակի գուռը կամացուկ բացվեց և ներս մտավ մի կարճահաստկ զինվորական, սուրը կողքից կախած:

— Բարի իրէկնան, նանի՛,—ասաց զինվորականը խըռպատ ձայնով: Անուշ տառն սկզբում շվիթվեց, վոս ընկած կարճատես աչքերը ճպճպացին, ու նա ձեռքը դրեց ճակատին:

— Բանակային եմ, ուզմաճակասից եմ վերադարձել, գնում եմ մերոնց տեսնելու, էս զիշեր գուցե հյուրասիրես,—գալճյալ խոսեց բանակայինը ձեռքի սկարկը մի կողմ դնելով:

— Բարնվ, հազար բարի՛, որդի ջան, —ասաց տառը տեղից վեր կենալով, —նստիր, որդի ջան, հոգնած կլինես, կարող է վիրավոր էլ ես... իսկ ես քեզ համար թեյ կըպատրաստեմ:

— Զէ՛, նանի, նեղություն մի քաշի, ոչինչ հարկավոր չի, միայն ինձ տեղ պատրաստիր, քնեմ:

— Էղ լոնչպես կլինի, սոված քնե՞ս: Ափսոս տանը մարդ չկա: Որ սպասես, Տիգրանս կղա: Դպրոցում ներկայացում են տալիս:

— Զեմ կարող սպասել, նանի, ես պիտի քնեմ:

Տառը տեղ պատրաստեց ու իրեն իրեն խոսում էր.

— Նանը մատաղ լինի քեզ, որդի, լավ կրակել կիմանաս, չէ՞՛, ու հիմի ինչքան անօրեն թշնամի ես սպանե՞լ, կոներդ կանաչեն:

— Թշնամու վրա ինձանից լավ կրակող չես գտնի, —
դովում էր իրեն բանակայինը։ Հետո էլի ինչոք բաներ
պատմեց իր քաջագործությունից և պատրաստվեց քնելու։

Քիչ հետո Տիգրանի ընկերներից մեկը եկավ ու տա-
տին հայտնեց, որ Տիգրանը տուն չի դալու, գնացել է
քեռոնց մոտ։

— Լավ էր, որ դու էլ եկար, որդի ջան, — խոսեց
պառավը և լույսը հանդցըրեց, — տղաս էլ քեզ նման ճա-
կառումն է, փաշխառների դեմ. հարսն էլ զիշերը աշխա-
տանքի է գնացել։ Տիգրանս էլ հրես չեկավ, մենակ էի
մնալու։

Մթության մեջ տառը շարունակում էր խոսել.

— Տիգրանս շատ է սիրում դերասանություն, շնորհքն
էլ աշխարհիս չափ է։ Թատրոնում էնողես է վուխվում,
որ շատերը չեն ճանաչում։ Շատ ուրիշն է լինելու։

— Գուցե դու էլ չճանաշես, նանի, — ասաց բանա-
կայինը։

— Ի՞նչ ես ասում, որդի, ես իմ թոռանը չճանաչեմ.
ինչքան էլ վուխվի, հենց ձենից կիմոնամ Տիգրանիս։

Հետո էլի մի քանի բան ասաց պառավը, դովեց
Տիգրանին, որդու մասին պատմեց ու քնեցին։

*
* *

Առավոտը նոր էր բացվել. տառը դեռ անկողնում
էր, ուրիշ անդամ նա շուտ էր վեր կենում, որ
թեյ դնի, Տիգրանին արթնացնի և դոլոց ուղարկի։ Այս
առավոտ նա կարող էր մի քիչ էլ մնալ անկողնում, բա-
նակալին հյուրը հո շուտ չէր գնալու։ Բայց այսար շատ
զարժացավ, ուղղակի ապշեց, երբ հանկարծ բանակայինի
անկողնից գլուխիր բարձրացրեց ինքը՝ Տիգրանը և մատա-
լով ասաց,

— Տատի, գպրոցից չե՞մ ուշացել...



ԴԵՐԱՍԱՆԻ ՏՂԱՆ

Վաշիկը դպրոցից տուն եկավ հուզված, լացակումած։ Աչքերը կարմրել էին, կլորիկ, սիրուն գեմքը ծամածովում էր և նա զսպում էր իրեն, որ լաց չլինի։

Մայրիկը վախեցած ընդառաջ գնաց, վերցրեց պայուսակը և ձեռքը դնելով տղայի ուսին հարցրեց։

— Ի՞նչ է պատահել, Վաշիկ ջան, ով է վիրավորել
քեզ։

Տղան պատասխանելու փոխարեն ընկավ մոր գիրկն ու լաց եղավ։ Մայրն ավելի շփոթվեց։

— Ի՞նչ է պատահել, ջանիկս, ինչո՞ւ ես լալիս, — անհանդիսա հարցնում էր նա, իսկ Վաշիկը չէր պատասխանում։ Ոլուխը մոր դըկում թաղած շարունակում էր հեկեկար։

«Հիվանդ է»՝ վախեցավ մայրը, բռնեց մանկան ձեռքը ու նայեց զարկերակը։ Վաշիկը ետ քաշեց ձեռքը։

— Ես հիվանդ չեմ, — ասաց նա չոր։

— Հապա ինչո՞ւ ես հուզվել, սիրելիս, գուցե դասդ լավ չես պատասխանել, կամ կովել ես որևէ մեկի հետ, — ասաց մայրը։

Տղան նորից լոեց ու դլուխը կախ գցեց։

— Դու քաղցած ես, առավոտն էլ կարգին բան չկեցար։ Ճաշիր ու գնա հայրիկի մոտ։ Նա թատրոնում քեզ է սպասում։ Քիչ առաջ զանդահարեց, թե կոշիկներդ պատրաստ են, — ասում էր մայրիկը Վաշիկին զբաղեցնելու համար։

Բայց մոք վերջին խոսքի վրա տղան զլուխը բարձրացրեց ու չոր ասաց.

— Թատրոն չեմ գնա, և կոշիկներ էլ պետք չեն ինձ։
Մայրը ապշահար նայեց որդուն։

— Ինչպես թե, — ասաց նա, — ի՞նչ է նշանակում այդ-
չե՞ս որ հայրիկդ է պատվիրել։

— Ինձ կոշիկ պետք չէ, — կրկնեց Վաչիկը,

— Ոչինչ չեմ հասկանում, Վաչիկ, այսօր ի՞նչ է պա-
տահել քեզ։

Տղան երկու քայլ արակ դեպի մայրը և բռնելով
նրա ձեռքից հարցրեց.

— Հայրիկը Գերմանիայում չի եղել։

Մայրը տարակուսանքով նայեց Վաչիկին։

— Ո՞չ, նա երբեք Գերմանիայում չի եղել։

— Ֆաշիստ լնկերներ չի ունեցել։

— Ինչե՛ր ես ասում, Վաչիկ, — գրեթե ճշաց մայրը։

— Ո՞չ, ասա, չի ունեցել, — համառեց տղան։

— Դե իհարկե չի ունեցել, նա հին կոմունիստ է,
կարմիր պարտիզան է եղել...

— Հապա ինչու է ֆաշիստ դառնում, կոմունիստ-
ին մատնուի, գնդակահարում, զյուղեր հրդեհում, — ընդ-
հատեց Վաչիկը լացի ծայնով։

— Ախ, թատրոնո՞ւմ, — բացադանչեց մայրը հաս-
կանալով որդու վրդովմունքի շարժառիթը, — ահա թե-
ինչ. — շարունակեց նա ժպտալով, — ախը դու ինձ բոլո-
րովին շփոթեցրիր. չե՞ս որ հայրիկը դերասան է և այդ-
ամենը բեմումն է կատարվում, թատրոնում այդ դերն-
են հարմար տեսել և նա էլ խաղում է, մի՞թե վատ-
ըան է։

— Իսկ ես չեմ ուզում. որ նա այդ դերը խաղա-
մայրիկ, չեմ ուզում, չեմ ուզում, — ասում էր Վաչիկը

ստքերը դետնին դոփիելով, — մի տեսնելի՞ դպրոցում ինչ
էին խոսում հայրիկի մասին:

— Ի՞նչ, — հարցը եց մայրը շուելով տղայի գանգուր-
ները:

* * *

Վերջին դասամիջոցին դառլնկերները հավաքված
մի անկյուն՝ զըռուցում էին երեկ ցերեկով իրենց տե-
սած ներկայացման մասին: Դասարանում ըմբիշի անուն
հանած վաղգենը, բարձրահասակ, կապտաչյա և չար մի
պատանի, եռանդով պատմում էր ներկայացման առան-
ձին դեպքերը, խոսում էր դերասանների խաղի մասին,
վիճում էր սրա, նրա հետ ու աղմկում: Նրան լրացնում
էին ործվաքիթ, թուխ աչքերով Բաբկենը. պեպենոտ
դեմքով Մուրիկը և էլի ուրիշներ: Երբ խոսք ընկավ ֆա-
շիստի դերակատարի մասին, տղաներն ավելի բորբոքվե-
ցին: Բաբկենը ձեռքը բոռնցք անելով թափահարեց
օդում:

— Ի՞մ հայրիկը ուղամաճակատում զոհվել է, — ասում
էր նա, — ֆաշիստներն են նրան սպանել: Ինձ այնպես էր
թվում, թե հենց այն սրիկան է սպանել... Մտածում էի
բեմ վաղեմ ու քացով տամ, ավագակի փորը պատռեմ...
Երեք կոմունիստի գնդակահարեց, զյուղը հրդեհեց ու անա-
մոթի պես հրճվում էր... Ես նրան լավ հրճվանք կպատ-
ճառեի...

Վաշիկը գիտեր, որ խոսքն իր հայրիկի մասին է,
սպըթնել, կուչ էր եկել մի անկյուն, կարծես ընկեր-
ներից թաքնվելու համար: Մեկ մտածում էր գոռալ ըն-
կերների վրա, ասել, որ նրանք իրավունք չունեն վի-
րավորելու իր հայրիկին, որ հայրիկը միայն բեմումն է
ֆաշիստ ձեանում, բայց չէր համարձակվում: Երեկ նա
թաքցը էր հոր մասին. «Հայրիկն այս ներկայացմանը

չի մասնակցում», պատասխանել էր նա ընկերների հարցին՝ իր ստից կարմը ելով։ Այժմ նա չէր կարող և չէրուզում մատնել իրեն ու հայրիկին, խայտառակվել ընկերների առաջ. մի կերպ իրեն զսպելով հետեւում էր տղաների զրույցին։

Նրան սկսում էր տանջել այն միտքը, որ իր ընկերներից շատերի հայրերն ու հարազատները դոհվել կամ վիրավորվել էին հայրենիքի համար, իսկ իր հայրիկը ֆաշիստի գեր է խաղում, բեմի վրա մարդկանց է սպանում, գյուղեր հրդեհում...

Այդ միտքը հետղիետե այնպես էր կլանում տղախն, որ նա այլև չկարողացավ դիմանուլ ու դուրս փախավ դոլոցից։

*
* *

Երեկոյան թեյասեղանի շուրջը նստած մայրիկը եղելությունը պատմեց ամուսնուն՝ դերասան Վարդուճյանին։ Սա դրկեց որդուն, գլուխը սեղմեց կըծքին ու համբուրեց։

— Դու մի՛ հուզվիր, սիրելիս,—ասում էր հայրիկը բարի հայացքը հառելով որդու աչքերին, —քո հայրն էլ շատ է կռվել թշնամիների գեմ. 1920 թվին երեք տեղից վիրավորվել եմ... երկու տնկամ բանտ եմ նստել ու կախաղանից եմ աղատվել...

Վաշիկը հանգստացած՝ խաղաղ նայում էր հորը։ Այնպես ըարի, այնպես լավ էր նրա հայացքը, որ տըղան զարմանում էր, թե այդքան լավ հայրիկը ի՞նչպես էր փոխվում, մարդ սպանում, գյուղեր հրդեհում։

— Թշնամու դեր մի՛ խաղա հայրիկ, —հանկարծ ասաց,

տղան մի տեսակ աղերսական ձայնով,—ախր ալդ քեզ
բոլորովին չի սազում... Դու ալնպես լավին ես, բարի...
Վարդումյանը ծիծաղեց:

— Ես հասկանում քեզ, սիրելիս,—ասաց նա վաղա-
քըշանքով,—դու բացատրի՛ր քո ընկերներին, որ անհրա-
ժեշտ է թշնամուն լավ ճանաչել, մերկացնել նրա հոգին,
նրա ստոր դործերը, որպեսզի հնարավոր լինի ամբողջ
ուժով առել նրան, որպեսզի երբեք թույլ չտանք ոչ մի
թշնամու ոտք դնել մեր սըրադան հողը:

— Դու լավ, շատ լավ հայրիկ ես,—շշնջում էր տը-
ղան հոր վզով վաթաթված:



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Զանդը տվին, իսկ դասարանում աղմուկը չէր հանգարտվում։ Աշակերտներն իրենց տպավորություններն էին պատմում ճամբարից, ամառանոցից, հայրենի երկիրն ուսումնասիրելու համար կատարած արշավներից։ Պատմելու այնքան ըան կար, ու դասամիջոցներն այնպես արագ էին անցնում։ Դանզըրահեր մի աղա պատմում էր, թե իրենց ջոկատն ինչպես անցկացրեց գիշերն անտառում, ինչպես են ընած նապաստակի վախեցրել, գայլի ճադ փախցրել։ Մեկուրիշը վրա-վրա տալով նկարագրում էր իրենց ձկնորսությունը Սևանում։ Վերջին շարքում նստած մի աղա բարձր արտասանում էր՝ ձեռին-ոտին անելով, շեշտելով ամեն մի բառը և դասը լցնելով իր սուր ճայնի հնչյուններով։

Միայն մանրիկ, ու աչքերով մի աղա չէր մասնակցում դասարանի աղմուկին։ Նա կանգնել էր աշխարհի մեծ քարտեղի մոտ և ուշադիր նայում էր դունավոր կետերին, շրջանակներին, ծուռ ու մոռ զծերին։ Երբեմն բարձրանում էր ոտքի ճայրերի վրա, վեղը երկարում, ձգվում, որ լավ տեսնի, թե ինչ է զրված կամ նկարված քարտեղի հեռավոր մի կետում։ Նրա անունը Արշակ Դայան էր, իսկ դասարանում նրան կպցրել էին, նաև «աշխարհագև» մականունը։ Կարծում եք նրա համար, որ Արշակը լավ էր սովորում աշխարհագրություն։ Ճիշտ հակառակը։ Նա աշխահագրություն լավ չէր սովորում և անցյալ տարի հաղիվ չկտրվեց ու չմնաց վեցերորդ

դասարանում։ Մյուս առարկաներից Արշակը չորս ու
հինգ էր ստանում, դեռ ինքն էր ընկերներին օգնում։
արի տես, որ աշխարհագրությունը մի տեսակ չէր
ստացվում, չէր կարողանում հիշել երկրների, քաղաք-
ների ու գետերի անունները, քարտեզի վրա նրանց
տեղերը խառնում էր իրար, իսկ վոքը երկրներն ու
քաղաքները ուղղակի տանում, թափում էր ծովերն ու
օվկիանոսները։ Ահա թե ինչու ընկերները նրան «աշ-
խարհագետ» անունն էին շնորհել։

Այսօր Արշակ Դայանը ուշադիր ու երկար զննում
էր քարտեզը։ Գուցե նրա համար, որ աշխարհագրության
նոր դաստիարակությունը էր պալու։ Տղային թվում էր, որ նա հենց
առաջինն իրեն է հարցնելու։ Ո՞վ զիտե, մեկն ու մեկը
նրան չի ասել, թե այդ դասարանում մի աշակերտ կա՞
Արշակ Դայան, նու լավ չի սովորում աշխարհագրու-
թյունը, ամեն ինչ խառնում է իրար։ Դե դաստիարակուն
էլ հենց իրենից կոկսի ...

Մինչդեռ Արշակ Դայանն իր համար նորանոր եր-
կը ու քաղաքներ էր հայտնագործում, դուռը բաց-
վեց ու դասարան մտավ ուսուցիչը։ Երեխաներն շտապե-
ցին տեղավորվել։ Արշակը շուռ եկավ և ուսուցչին տես-
նելով շիտթվեց, ժպտաց ու վազ տվեց դեպի իր նստա-
րանը։ Բոլորի հայացքը ուղղված էր նոր ուսուցչին։ Սա
քառասուն անց, թիկնեղ, խոշոր դիմագծերով ու դեմքի
բարի արտահայտությամբ մարդ էր։

— Բարե ձեզ, — հնչեց ուսուցչի սիրալիր ձայնը և
դասարանը ուրախ պատասխանեց.

— Բարե Ձեզ։

Կարծես այդ էլ բավական էր, որ առաջին ըռակե-
ների լարվածությունն ու հուզմունքը տեղի տան։ Նոր
դաստիարակությունը սիրով ընդունվեց և ինքն էլ զգաց այդ։

Սովորական ստուգումից և հարց ու փորձից հետո դասատուն սկսեց աշակերտներին քարտեղի մոտ կանչել ստուգելու, թե նրանք ինչպես են յուրացրել և ինչ են հիշում անցած նյութերից: Եվ ահա, որքան էլ զարմանալի թվա, ստացվեց հենց այնպես, ինչպես ենթադրում էր Արշակ Դաւանը, — դասատուն առաջինը նրան կանչեց: Երեխաներն անհանգստացան, զիտեին, որ Արշակը շփոթվելու է, ծովերն ու ցամաքները խառնելու է երար, փոխելու է զետերի ընթացքը... Եվ նոր դասատուն հիանթափփելու է իրենց դասարանից... Արշակի կողքը նստած տղան պատրաստվում էր համոզել նրան, որ մի պատրվակ բերի ու չգնա քարտեղի մոտ, բայց Արշակն արդեն քայլում էր շարքերի միջով: Նա սեղանից վերցրեց ցուցափայտը և մոտեցավ քարտեղին: Նրա զեմքի վրա ու աշքերում առկայժում էր անսովոր վստահության շողը, որ ամենից լավ զգում էր դասատուն:

— Արշակ Դաւան, այս, — սկսեց նա իր վախուկ, սիրակիր ձայնով, — շատ լավ, Արշակ, ինչպես երեսում է՝ դու սիրում ես աշխարհագությունը և լավ կսովորես: Դե, որեմն ցույց տուր աշխարհամասերն իրենց սահման ներով...

Դասարանում թեթև աղձկեցին. «Ինչպե՞ս չէ, լավ է սովորում ու աշխարհագետ էլ է»՝ իրար ականջի փըսփըսում էին աշակերտները: Բայց ոչ դասատուն և ոչ էլ մանավանդ Արշակ Դայանը ուշադրություն չդարձրին նրանց վրա: Արշակը հայացքը քարտեղի ինչոր կետին հառած համարձակ սկսեց պատասխանել:

— ... Ասիայի արևմտյան սահմաններն են՝ Ուլալյան լեռնաշղթան, Ուրալ զետը... — դասարանի քարտության մեջ հնչում էր Արշակ Դայանի ձայնը և ցուցափայտի սուր ծալը լեռնաշղթայի երկարությամբ ու

սպա գետի ընթացքով դանդաղ իջնում էր ներքեւ։ Հաս-
նելով ինչոր կետի, Արշակը կանգ առավ և շուռ գալով
դեմի դասատուն ասաց։ — Ահա այստեղ, ընկեր Արմենյան,
Զկալով քաղաքն է Ռուբալի աջ ափին։ Հայրիկս շատ բան
է պատմում նրա մասին։ Առաջին անգամ նրանց զորա-
մասն այստեղ է եկել Սպիտակ տներով սիրուն քաղաք
է ու մի մեծ այգի ունի... Հայրիկն այդ այգում շատ է
նստել։ Ասում է ...

Դասատուն քթի տակ ժպտաց, նայեց ոգեսրված
տղակին ու ինքն էլ ինչոր հիշողությունից բռնկվեց։

— Իսկ Զկալովի մեծ կամուրջը, իսկ աստղադի-
տարանը... հիշում է, — ասաց նա ոտքի կանգնելով, բայց
խելույն էլ հանգստանալով ավելացրեց, — դե լավ, շաբա-
նակից Արշակ...

Արշակ Դայանն էլ սթավովեց ու շարունակեց ցույց
տալ աշխարհամասելոն իրենց սահմաններով։

— ... Իսկ ինչ վերաբերում է Անտարկտիդային...
— լսվում էր նրա զբնուն ձայնը

— Ապրես, Արշակ, — ասաց դասատուն, երբ նա հա-
շեցը փակեց նաև Անտարկտիդայի հետ, — այդպես էլ գի-
տեի, որ դու սիրուժ ես աշխարհագրությունը, դե հիմա
մեզ ցույց տուր Եվրոպայի մայրաքաղաքները. կարող
ես, հր՞:

Արշակն ավելի ոգեսրվեց. «Ինարկե կարող եմ» տ-
սում էր վստահությունից շողացող նրա դեմքը։

— ... Վարշավան Լեհաստանի մայրաքաղաքն է, ահա,
... — խոսում էր Արշակը ցուցափայտի ծայրը դնելով սև
շրջանակի վրա, — մեր զորքերը Վարշավան ազատագրե-
ցին 1945 թվի փետրվարին... Հայրիկը հինգ օր ապրել
է այստեղ ու նրա Քաղաքագլխին էլ տեսել է ճառ

ասելիս։ Շատ մեծ քաղաք է... Ահա Բուդապեշտը՝ Հունգարիայի մայրաքաղաքը... Սրա զործն ավելի դժուվար էր, ֆաշիստները մի ամսից ավելի դիմադրում են, բայց մերոնք վերջը քշում են նրանց։ Հետո մեր զորքերն աղատագրում են Բուխարեստը՝ Մումինիայի մայրաքաղաքը, — և Արշակը ցույց է տալիս Բուխարեստը։ — Այ, հենց անցած երեկոյան էլ հայրիկը էդ մասին էր պատմում... Աժքողջ ամառը մենք միասին էինք ու հայրիկս շատ, շատ բան է պատմել, իմ քարտեզի վրա էլ ցույց էր տալիս տեղերը... Սա էլ Պրադան է՝ Զեխոսլովակիայի մայրաքաղաքը։ Շատ սիրուն քաղաք է. հայրիկն այստեղ մի ամսի չափ ապրում է ու շատ լավ էլ հլուրասիրում են։ Էստեղից հայրիկը անցնում է Սոֆիա՝ Բուլղարիայի մայրաքաղաքը, Ալստեղ նրան սիրով ընդունում է Դիմիտրովը ու...»

Արշակ Թայանն այնպես էր ողերըվել, որ արդեն ոչ թե խոսում էր, այլ կարծես արտասանում էր վաղուց անգիր արած մի պատմություն։ Նրա սև աշքերը խոշորացել, վառվում էին, ճակատը քրտնել էր, քրտինքի մի կաթիլ էլ կախվել էր քթի ծայրից։ Դեպքերն ու փատերը խառնվում էին իրար, երբեմն էլ նրա երեակայությունն ստեղծում էր կամ իրար միացնում զանազան դեպքեր ու տեսարաններ, որոնք ջերմանալով ողերը թյան կրակով հնչում էին համոզիչ ու լավ։ Օրինակ հայրիկը երբեք չէր պատմել նրան, թե եղել է Սոֆիայում և ընկեր Դիմիտրովն էլ ընդունել է նրան, բայց ալդ պահին Արշակն ինքն էլ հավատում էր իր հնարածին ու պատմում էր, ցույց տալով քաղաքները քարտեզի վրա։ Դասատուն և մանավանդ դասարանը դարձանքից ու հիացմունքից շունչները պահած կրանում էին տղարի ամեն մի խոսքը։

— ... Մայիսի երկուսին մեր զորքերը մտնում են Բեռլին՝ Գերմանիայի մայրաքաղաքը, — զբնդում էր Արշակի ձայնը: — Ենտեղ Բրանդենբուրգիան դարձասներ կան, հայրիկս իր զորամասով առաջինն է ներս մտնում... Հրամանատարը լսում է էղ մասին ու հայրիկին կանչում իր մոտ, ասում է. «Մալադեց, մայոր Գասպար Դայան, դու իսկական հերոս ես ...»:

— Մայոր Գասպար Դայան, — տեղից վեր թռավ դասատուն ու մի քայլ արակ դեպի տղան, — ուրեմն նաքո հայրն է ... Ախր ես նրան շատ լավ գիտեմ ու Պրագայում էլ հենց միասին էինք: Ահա թե ինչ, սիրելիս, ուրեմն դու մայորի որդին ես: Շատ ուրախ եմ... Վաղուց է նրան չեմ տեսել, երկու տարի կլինի, երբ է վերադարձել տուն:

— Արդեն երկու անխո է. վերջելու Վիեննայումն էր, Ավստրիայի մայրաքաղաքում...

Եվ Արշակը ցուցափայտի ծայրը նորից շարժեց քարտեղի վրա:

— Ապրես, Արշակ, դու շատ լավ գիտես աշխարհագրություն, — ասաց դասատուն նորից շոյելով տղայի գլուխը:

Դասարանը ողերված ծափահարեց: Արշակ Դայանը առաջին անգամ զովասանք էր ստանում աշխարհագրության դասին: Բայց բոլորն էլ զգում էին, որ որդու այդ հաղթանակի մեջ կար նաև հաղթության մասը:



Օ Դ Ա Պ Ա Ր Ի Կ Ը

Մայրը քաղաքից Աշոտիկի համար բերեց գունավոր,
սիրուն մի օդապարիկ, այնքան սիրուն, որ ավելի լավը
դժվար թե լինի։ Այնքան էլ թեթև, որ եթե թողնեիր,
կարող էր ինքն իրեն թռչել օդում, թռչել, բարձրանալ
մինչև . . .

— Մինչև ամպերը կհասնի, մայրիկ, — հարցնում էր
Աշոտիկը։

— կհասնի . . . — ժպտալով հաստատում էր մայրիկը։
Աշոտիկն ուրախուրախ դուրս եկավ բակ, հա-
վաքելով ընկերներին՝ ցույց էր տալիս նրանց։

— Սրա չափ մեծը ուրիշ տեղ չես ճարի, թեկուզ
աստղերին հասնես, — ասում էր նա օդապարիկի թե-
լից ձգելով ու օդում խաղացնելով։

— Լուսնի վրա էլ չկա, — հարցնում էր Ռազմիկը՝
զարմանքից աչքերը չուած։

— Լուսնի վրա էլ չկա։

— Իսկ արեի՞ . . .

— Արեի էլ . . .

Հետո էլի հարցեր տվին, և Աշոտիկը բոլորին էլ
զարմացրեց։

Մեկ էլ նրանց մոտեցավ չորսորդ դասարանցի
Բենիկը, նա ձեռքերը դրել էր շալվարի գրանը և
քմծիծաղ տալով նայում էր օդում պտույտ գործող օ-
դապարիկին։

— Ես դրանից մեծն ունեմ, երեխեք, — ասաց նա
թշերն ուղղնելով։

Երեխաները զարմանքից քիչ էր մնում ճշային:

— Զէ՛ մի, սրանից մե՛ծը . . . — վրա տվին այս ու
այն կողմից, իսկ Աշոտիկը կարմրեց:

— Հա՛, բա՛, շատ մեծ, — պնդեց Բենիկը կճառ քիթը
վեր ցցած, — երազումն եմ ունենում, նստում եմ մեջը,
հուզ եմ տալիս կոճակը ու, պուկ, թռիք, ուր քեփդ կու-
զի . . . Զկալովից էլ բարձր:

— Ինչ լավ է, — ծափ տվին Վազգենն ու Թագ-
միկը, — աստղերին կհասնե՞ս . . .

— Բան ասիք . . . հենց էս գիշեր Մարսի վրա էի,
— վրգեց Բենիկը, — դե ախը դուք մանկապատեզում
իսկի շեք էլ լսել Մարսի մասին. Էդալիսի մոլորակ կա-
երկնքում: Ուրիշներն էլ կան, բայց ամենից մեծը նա-
է . . . այ, էնտեղ է, հա (նա երկնքում ցույց տվեց ինչոք
տեղ): Էնտեղի քամիները դունավոր են լինում . . . մար-
դիկ էլ, այ, էս ճկույթիս չափ! . . . Նրանց Սերգո Համ-
բարձումյանին մի մատով կգլորեմ . . . էս գիշեր էլ Յու-
սլիտերի վրա եմ թոշելու . . . ցուըտ է լինելու, հա . . .

— Պատհ, — կրկին վրա տվին երեխաները, — դե
ցույց տուր, էլի, ցույց տուր . . .

— Յույց էտամ, թող մեծանամ . . . ըոլոր մոլորակ-
ների վրա կլինեմ ու երկինքն ինձ համար՝ ոնց որ մեր
տան առաստաղը . . . Էնքան բան կիմանամ . . .

Բենիկը լոեց: Բոլորն էլ լուռ էին: Օդապարիկը
առաջած երեխաները նայում էին երկնքի հեռավոր
կապույտին:

* * *

... Ուշ երեկոյան, երբ մայրը որդու ննջարանը
մտավ վերմակն ուղելու, տեսավ Աշոտիկին խորը քնի
մեջ ու օդապարիկն էլ գրկին . . . Աչքերը կիսաբաց էին,
ժպտում էր ու ինչոք բան էր ասում: Խեղճ մայրիկը

ոլտեղից իմանար, որ տղան օդապարիկ նստած թռչուն
էր գեղի աստղերը և երկի արդեն մոտենում էր Մար-
սին։ Գուցե և Մարսի վրա էր ու նախում էր գունավոր
քամիների խաղը... Այնտեղից էլ թռչելու է Յուպիտե-
րի վրա, որ Բենիկին հասնի... Զէ, աայրիկը չղիտեր
այս մասին ու դրա համար էլ օդապարիկը վերցրեց
նրա գըկից, վերմակը քաշեց ուսին, համբուրեց քըրա-
նած այտը և դուրս եկավ։ Աշոտիկն էլի էր ինքն իրեն
խոսում, կարծես մայրիկին ասելիս լիներ։

— Ո՞ւրես տանում, մայրիկ, բա առանց զրան ո՞նչ
եմ ետ դառնալու...



ՄՐՑՈՂՆԵՐԸ

Մայրիկն այդ օրը տուն եկավ սովորականից ուշ, միայն մի անգամ համբուրեց Արփիկին, չեր խոսում և մի տեսակ խիստ էր երեսում։ «Երեխ դործաբանում բան է պատահել», մտածեց աղջիկը և ինքն էլ տիսլեց, թեև դա չեր էլ հաջողվում. այդ օրը նա երկու առարկայից հինգ էր ստացել։ Ուզում էր մոր հետ հենց այդ մասին խոսել, բայց չեր համարձակվում։ Եթե հանկարծ մայրը բարկանա ու ասի՝ «Գլուխ չունեմ, Արփիկ...»։ Ու լուսն էր։ Մայրն էլ ոչինչ չեր խոսում։ Բայց երբ նստեցին ճաշի, Արփիկին այլիս չհամբերեց.

— Մայրիկ, այնպես տիսուր է...

Մայրը զարմացած նայեց աղջկան։

— Ինչու, Արփիկ ջան, ինչու ես տիսրել, — հարց-ըեց նա։

— Հայրիկն ուշացավ... Իսկ դու էլ չես խոսում... Տիսուր ես... — կարծես հեկեկալով ասում էր Արփիկը։

Հայրը Մոսկվա արտադրական գործուղում էր գնա-ցել։

Մայրիկը ժպտաց, գրկեց աղջկան ու սեղմեց կրծքին։

— Տիսուր չեմ, բալիկ ջան, — ասաց նա, — իսկ հայ-րիկը շուտով կդա...։

— Հա... Ուրեմն գործարանում ոչինչ չի պատահել, — բացագանչեց Արփիկը ծափ տալով, — հապա ինչու չես խոսում... Իսկ ես այնքան ասելիք ունեմ... Երկու առար-կայից հինգ եմ ստացել... Այնպես լավ էի պատմում..

Եթե այնտեղ լինեիր...— ասում էր աղջիկը գլուխը սեղածելով սոր կը ծքին:

— Ապրես, Արփիկ ջան, խելոքս... իսկ ես մռացել էի քեզ ասել, որ այսօր մըցաւթյան պայմանագիր ենք կնքել ես ու Մարդարիտ մորաքույրը: Դե գիտես՝ տոն է գալիս ու պետք է լավ պատրաստվել... Երկուսս էլ խռացել ենք մեծ տոնը դիմավորել տարեկան պլանը լրիվ կատարած: Ժողով եղավ, ու հանդիսավոր խոսք տըմինք բանվորների առաջ: Գիտե՞ս՝ ինչ վատ կլինի, աղջիկ ջան, եթե չկատարենք տված խոսքը... Ավելի լավ է գետինը ստնենք:

— Օ՛յ, ինչ վատ կլինի, մայրիկ, — կրկնեց աղջիկը վախեցած, ասես մայրն արդեն խռատումը չէր կատարել և դլսահակ կանգնած էր տոնական ժողովի առաջ,— բայց դուք անպայման կկատարեք պլանը, մայրիկ, դու էլ, մորաքույր Մարդարիտն էլ...

Ճաշից հետո Արփիկը վազ տվեց ընկերուհու մոտ: Դա մորաքույր Մարդարիտի աղջիկ Լենան էր: Նրանք նույն դպրոցումն էին սովորում, միևնույն պիոներական ջոկատումն էին և ահա չորս տարի էր, ինչ մտերիմ դասընկերուհիներ էին: Արփիկը Լենալին բակ տարավ՝ ու սկսեցին վիսվիսալ, թեև նրանց մոտ ոչ ոք էլ չկար: Ու ոչ ոք էլ չխմացավ, թե ինչ խռեցին ընկերուհիները:

Հետեւյալ առավոտը Արփիկը մայրիկից շուտ զարթնեց, թեյ դրեց, տունը կարգի բերեց, փոքր եղբոր համար հարևան կնոջից կաթ բերեց, նախաճաշ պատրաստեց ու, երբ մայրիկը նոր էր լվացվել, Արփիկը ձայն տվեց.

— Պատրաստ է, մայրիկ...

Մայրը զարմացավ, բայց ճայն չհանեց: Ուրիշ անգամ Արփիկը ուշ էր վեր կենում անկողնից ու դրեթե

ոչ մի բանի ձեռք չէր տալիս: Միասին կերան համով
պատրաստած նախաճաշը, և մայրիկը աղջկանն ու տղա-
յին համբուրելով գնաց գործարան: Գործարանում արդեն
տասը տարի էր, որ նըան ասում էին վարպետ Լուսիկ:
Նշանավոր կարող էր, ու Արփիկն ընկերուհիների մոտ
պարծենում էր նրանով: Նրա կարծիքով միայն մորա-
քույր Մարդարիտը կարող էր հավասարվել իր մայրի-
կին: Գործարանի մուտքի մոտ երկու վարպետները
հանդիպեցին իրար ու երկուսն էլ զարմացան:

Ամեն մեկին թվում էր, թե ինքը շուտ կդա. Մար-
դարիտն այն է ուղում էր հարցնել՝ ի՞նչ չկես է որ շուտ
ես եկել, բայց՝ չհարցը եց, Լուսիկն էլ ուղում էր աղջկա-
ժամին մի բան տոել՝ չասաց ու մտան ներս:

Իսկ դպրոցում ընկերուհիները նորից փսփսացին լ-
րար ականջի, ու նորից ոչ ոք չիմացավ, թե ինչ էին
տսում ...

Աշխատանքից հետո Մարդարիտը տուն դարձավ և
հենց շեմքի վրա էլ կանգ առավ: Աենյակները մաքուը
սրբված, կարդի էին բերված, ամեն ինչ իր տեղը, Լե-
նան էլ թախտին նստած խաղում էր հինգ տարեկան
քընջ հետ, որին նոր էր բերել մանկապարտեղից: Ուրիշ
անգամ Մարդարիտն ինքն էր հողնած գնում մանկա-
պարտեղ ու աղջկան բերում, ինքն էր սրբում սենյակ-
ները: Այս ինչ բան է, — զարմանում էր մայրը, — ու
ոչինչ չէր ասում: Լուսիկն էլ տանն ամեն ինչ պատ-
րաստ տեսավ, սեղանը ճաշի համար սարքված, ճաշը լրց-
րած... «արդեն խելահաս աղջիկ է, ամեն ինչ ձեռից կդա-
ու մորն օգնում է, ինչ կա որ»՝ ինքն իրեն ասում էր
մայրը համբուրելով աղջկա այտերը: Այդ մտսին ընկե-
րուհիները ոչ ոքի ոչինչ չէին ասում, նույնիսկ իրենց
մայրիկների հետ չէին խոսում, իսկ մայրիկներն էլ ի-
րարից էին դադանի պահում:

Բայց շուտով իրարից դադանի էլ սկսեցին անհանգըստանալ. — իսկ եթե աղջիկները տնալին զործերով զբաղվեն ու դասերից ետ մնան, վաս դնահատական ստանան...

Մի օր Մարգարիտը Լենային ասաց:

— Մի անի, Լենա ջան, ես մի կերպ կհասցնեմ... դասերիդ նայիր, ետ չմնաս:

— Մի մտածիր, ձայրիկ — ասաց Լենան վստահ տոնով, — չէ՞ որ ես պիոներ եմ...

Լուսիկն ավելի խիստ խոսքեր ասաց աղջկան:

— Հիշիր, որ հայրիկին խոստացել ես զերազանցիկ լինել — ասում էր նա հուզված:

— Եվ կլինեմ, մայրիկ, — ժպտում էր Արփիկը

* * *

... Գործարանում հանդիսավոր ժողով էր: Զեկուցումից հետո դիրեկտորը պատմաւմ էր, թե բանվոր-բանվորուհիներից ո՞վ ինչպես է կատարել մրցության պայմանագրով իր վերցրած խոսքը: Եթե նա ավեց Լուսիկի և Մարգարիտի անունները, որոնք իրենց խոստումն էլ էին զերազանցել, ժողովի ուրախ ծափահարեց, իսկ երկու վարպետները ոտքի կանգնեցին: Նրանք նստել էին նախադահության սեղանի մոտ, կողք-կողքի: Այդ ժամանակ դահլիճի հեռավոր անկյունից ոտքի կանգնեցին մաքուր հագնված երկու աղջիկ՝ պիոներական վզկապներով, ծաղկեվնջերը ձեռքներին: Ժողովականները հիացմունքով հետեւում էին նրանց, որ վմտահ քայլերով դնում էին դեպի բեմ: Արփիկն ու Լենան էին: Մայրիկները շվոթվեցին՝ տեսնելով իրենց աղջիկներին. ինչու էին նրանք եկել, ով էր նրանց բան ասել...

Փոքրիկ աստիճաններով բեմ բարձրանալով Լենան
ու Արփիկը վաղեցին դեսլի իրենց մայրերը, ծաղկեփըն-
ջերը մեկնեցին ու ընկան նրանց զիրիլ: Բոլորը ծա-
փահարում էին, իսկ Լուսիկն ու Մարգարիտը ուրախու-
թյան արցունքն աչքներին՝ համբուրում էին աղջիկնե-
րին:

— . . . Շնորհավորում եմ, մայրիկ...—Շնորհավորում
եմ...—շշնջում էին ընկերուհիները հուզմունքից շիկնած:

Ապա նրանք ցույց տվին իրենց օրագրերը. եր-
կուսն էլ չորս ու հինգ ունեին բոլոր առարկաներից:

— Շնորհակալ եմ, — ջանիկս, — ասում էր Լուսիկը, —
դու կատարեցիր քո խոստումը, ու հայրիկն ինչքան կու-
րախանա:

— Ապրես, Լենա ջան, — շշնջում էր Մարգարիտը:

Հետո դառնալով ժողովին Մարգարիտն ասաց
բարձրածայն:

— Ծնկերներ, սրանց շնորհիլ է, որ մենք կատա-
րեցինք մեր խոսքը...—ու նա ցույց տվեց Լենային ու
Արփիկին:

Այս անգամ ծափերն ավելի ուժգին թնդացին դահ-
լիճում:

. . . Հենց այդ երեկոյան հայրիկը Մոսկվայից վե-
րադարձավ, և Արփիկը հոր վզովս ընկած պատմում էր,
թե ինչպես են ինքն ու Լենան առաջին անգամ պայմա-
նավորվել օդնելու մայրիկներին, որ նրանք երկուսն
էլ հաղթեն մրցության մեջ:



ՕՂԱԿԱՎԱՐԸ

Երեկո է. արելը վաղուց մայր է մտել։ Ամպերն էլ, որ քիչ առաջ վառվում էին քուլա-քուլա, մթնեցին։ Լևոնիկը պառկել է տան կողքից հստոյ առվի ափին, կանաչների վրա ու նայում է երկնքին, որտեղ սկսում են վառվել առաջին աստղերը։ Նայում է ու միտքն են գալիս այսօրվա բոլոր դեպքերը։ Դաշիս են հերթով առավոտից սկսած ...

Նա նոր էր անկողնուց վեր կացել ու հավնվել, երբ հայտնեցին, որ ինքը նշանակված է հասկ հավաքող օղակի օղակավար։ Կոլխոզի նախագահ ընկեր Ավագյանը նրա փափլիկ այտը շոյելով ասել էր. «Իմ ժիր տղա, դու դպրոցում մովորել ու լավ զիտես, թե ինչ ուժ կա ամեն մի հասկի մեջ, դեհ, քեզ տեսնեմ...»։ Կոլխոզնիկներն էլ զովել էին Լևոնիկին. — մի հատիկ էլ չի թողնի դաշտում, այ կտեսնեք՝ ինչ օղակավար է լինելու... — ասել էին նրան։ «Օղակավար», — ասում էր ինքն իրեն Լևոնիկը, և այնպես լավ էր հնչում այդ տղան զարմանում էր, որ հպարտությունից գլուխը չի պտտվում։ Ամբողջ օրը նա իր օղակի հետ աշխատեց դաշտում, մեծավարի ձայն էր տալիս, քաջալերում էր տղաներին. — ոչ մի հասկ չթողնենք դաշտում, հա՛ ...

Արդեն ավարտվել է օրվա աշխատանքը, և նրա օղակը կատարել է մեկ ու կես նորմա։ Օղակավարն էլ հոգնած ու երջանիկ պառկել է կանաչին, ինչպես անում

էր հանդից տուն դարձող հալրիկը, և ննջում է: Ամբողջ ժամանակ աչքերի առաջ հասկեր են երեսում՝ տոռող, ուկեղույն քիստերով: Հետո, ինքն էլ շիմացավ, թե ինչպես կոպերը ծանրացան, աչքերը վակվեցին... Ու նա իր կողքին տեսավ մի մեծ հասկ, մարդու կերպարանքով, կարմիր փողկապը վղին... այնուեւ խոշոր աչքեր ուներ և այնպես լավն էր.

— Բարե, ընկեր օղակավար, — ասաց նա պատի առնելով, — իմ ընկերների ու բարեկամների կողմից եկել եմ շնորհակալություն հայտնելու քեզ և քո օղակի անդամներին:

— Բարե... բարե... — կմկմաց կեսնիկը, չիմանալով երազում, թե իրականության մեջ է տեսնում այս հրաշքը:

Դե սա ի՞նչ հրաշք է որ: Իր առաջ կանգնած է այդ օրը հավաքած բաղմաթիկ հասկերից մեկը, գուցե չենց այն մեկը, որ ինքը դաւավ հողակոշտի տակ: Բայց այ քեզ զարմանք, սա միայն հասկ չէ: Սա թաթիկներ ունի ու բոցի պես կարմիր փողկապ... այ, թե հրաշքն ինչպես է լինում...

— Ես ընկած էի ցողունից կտրված ու անօդնական, — անուշ ձայնով նորից իսուեց հասկը, — ու կկորչեի ցեխերի մեջ, կամ մկ ան առաջները կխժոեին իմ ոսկեղույն հատիկները, եթե քո ձեռքն իսձ չփրկեց... Ու քանիքանի ինձ նմաններ փրկվեցին այսօր քո օղակի ձեռքով...

Լևոնիկի լեզուն ուրախությունից կամ էր ընկել ու թեև շատ բան ուներ ասելու հասկին, բայց չէր կարողանում: Միայն ժպտում էր ու ձեռքերը թափ տալիս, իսկ հասկն ասում էր.

— Ուղարձ ես պատճեն, բարեկամ, թե ի՞նչ մեծ գործ եք անում դու և քո ընկերները: Այ, հենց վերցնեմ

միայն ինձ: Իմ շատ ընկերների հետ ես կդնամ կոլխոզի կալ, այնտեղ կկալսեն, և ինձանից քառասուն հատիկ դուրս կդա. քառասուն հատիկ... ապա՝ մի հաշիվ արա. գարնանը կցանեն, քառասուն հասկ կստացվի... սրանք էլ նոր հատիկներ ու հասկեր կտան... իսկ երկրի ուժն էլ հենց հատիկների մեջ է: Ինչքան շատ ցորեն ունենամեր հայրենիքը, այնքան հզոր ու զեղեցիկ կդառնա, մարդիկ էլ ավելի ուրախ ու երջանիկ կլինեն. Այ թե ինչ մեծ զործ եք անում դուք՝ պիոներներդ...

Նո իր վոքրիկ թաթիկներով շոյեց տղայի դանդուրներն ու այտը, և Լեռնիկը հուզմունքից քիչ էր մնում լաց լինի: Հենց այդ ժամանակ նրա ականջին հասավ մի ուրիշ ձախն էլ:

— Լեռնիկս... հոգնել ես... վեր կաց, ընթրիքը պատրաստ է:

Տղան աչքերը բաց արակ: Տեսակ մորը կողքին նստած, դուռ խը շոյելիս. հետո ուղղվեց, գրկեց մորը. բարձրածայն քրքջաց, ուզեց ինչոր բան պատմի:

— Մալրիկ... — հաղիվ կարողացավ արտասանել նա:

— Օղակավար բալիկս... — ասաց մայրը համբուրելով տղայի այտը:

«Օղակավար... այնպես լավ էր հնչում այդ Լեռնիկի ականջին...»



ԱՌԱՋԻՆ ԴԱՍԸ

Հայրենիք վերադառնալու երկրորդ օրը հայրը Սիրաքին դպրոց տարավ։ Մեղտեմքերի ուրախ մի առավոտ էր։ Հայր ու որդի անցնում էին Ստալինյան պողոտայով և Սիրաքը զարմանքով նայում էր մեծ, վարդագույն շենքերին, կանաչ, կանաչ, կանաչ պուրակներին, ինչպես երազում։ Ամեն քայլափոխի մի բան գրավում էր նրա ուշադրությունը, և նա դիմում էր հորը։

— Հայրիկ, մենք ալ կընանք այս պուրակեն ներս մտնել։

— Իհարկե, գառնուկս, ասոնք մեզ համար են շինված, — պատասխանում էր հայրը։

— Աս մեծ շենքն ալ։

— Ադ օպերայի շենքն է ու դարձյալ բոլորիս համար է…

— Աս աղբյուրն ալ։

— Այո, գառնուկս, ալո…

Թեև ուսումնական տարվանից մի քանի օր անցել էր, բայց դպրոցի դիրեկտորը զիջեց հայրենադարձ հորինդիրքը և Սիրաքին ընդունեց դպրոց։ Սիրաքն աչքաբաց տղա էր ու Բեյրութում չորս տարի հաջողակ սովորել էր։ Չորս տարուց հետո դպրոցի դռները փակել էին տղայի առաջ, «Օտարի համար այդ էլ շատ է», — ասել էին նրանք, և Սիրաքը երկու տարի պարապ թափառում էր ուսման կարուղը սրտում։ Երկու տարվա ընդմիջու-

մից ու երազներից հետո այսօր առաջին անգամ նա
պիտի զանգի ձայն լսեր...

Ու լսեց...

Այդպես անուշ դողանջ դեռ չէր լսել Սիրաքն իր
կլանքում։ Ուրախությունից ու հուզմունքից նա դողում
էր, սիրտն, ասես, ուզում էր՝ դուրս թռչի։

Դասարանը ընդարձակ մի սենյակ էր, լուսամուտ-
ներն էլ Մասիսներին դեմ-հանդիման։ «Միշտ նկարին
կնայեի ... իսկ հիմա աչքիս առաջ է... Զեռքս ալ մեկ-
նիմ, կհասնի ... Այսն օր կնկարեմ ու կուղարկեմ Գաբ-
րիելիկին... Շատ կուրախանա խեղճը ...»՝ մտածում էր Սի-
րաքը, երբ դասատուն ներս մտավ։ Դասարանը ոտքի
կանգնեց ու սիրով ողջունեց դասատուին։ Սա ժպտադեմ
մի տղամարդ էր. «Հալրիկին որքան է նման, — անցավ
Սիրաքի մտքով, — նրա պես բարի կժպտա... Որքան
պիտի սիրեմ...»։ Նրան ասում էին ընկեր Ազատյան։

Ընկեր Ազատյանն էլ իր հերթին նկատեց Սիրա-
քին ու ժպտալով մոտեցավ նրան, շոյեց գանգուրները։
Դասն սկսվեց. Ընկեր Ազատյանը հայտնեց, որ
շարադրություն են զրելու՝ «Աբովյանի մահը» թեմա-
յով։ Նախօրոք դասարանում կարդացել, պատմել են,
այժմ դասատուն մի անգամ էլ համառոտ կրկնեց նլու-
թը, վերհիշեց կարևոր թվերն ու փաստերը, և աշակերտ-
ներն սկսեցին զրել Սիրաքը չուզեց ետ մնալ իր ըն-
կերներից։ Նա Աբովյանի մասին մի քանի բան լսել էր
հորից, մի երկու բան էլ այժմ ուսուցչից հարցըց ու
ինքն էլ սկսեց։

Երբ զանգը տվին, բոլորն ավարտել էին, իսկ երկ-
ըորդ դասին ուսուցիչն ուզեց ստուգել մի քանիսի
զբաժը։ Կարդալու համար առաջինը, — գիտե՞ք՝ ով ցանկու-

թյուն հայտնեց,—Սիրաքը։ Աշակերտները ուրախ նայեցին նրան, իսկ դասատուն թույլ ավեց, որ նա կարդա իր շարադրությունը։ Տղան ոտքի կանգնեց, մի անգամ էլ նայեց Մասիսներին, որբեց ճակատի քրտինքը և դողացող ձախնով սկսեց...

Սիրաքը պատմում էր, թե այդ օրը, վաղ լուսաբացին ինչպես է Աբովյանը վերջին անգամ մնաս բարով ասել կնոջն ու զավակներին և տանից դուրս եկել։ «Դանդաղ քայլերով նա իջնում էր Քանաքեռից Արաբկիր տանող ճանապարհով։ Արաբկիրում նա տրամվայի վագոն է բարձրանում, ու բոլորը ոտքի կանգնած նրան տեղ են տալիս։ Քաղաք մտնելով Աբովյանն սկսում է զբունել փողոցներով։ գարնան կանաչ առավոտը նրան արբեցրել էր։ Նա քայլում էր Ստալինյան սլողոտայով, հիանում գեղեցիկ շենքերով, արձաններով, աղբյուրներով, մտնում էր պուրակները, նոր ծաղկած ծառերից հոտ էր քաշում... Հետո կանգնեց օպերայի շենքի առաջ ու գլխարկը հանեց...»։ Ապա Սիրաքի շարադրության մեջ՝ Աբովյանն իջնում էր Աբովյան փողոցով, ամեն քայլափոխի կանգ առնում ու հառաջում։ «Ո՞հ, — շնչում էր նա, — ինչպես պետք է ձեռք բարձրացնեմ ինքս ինձ վրա, ինչպես պիտի հրաժարվեմ այս սքանչելի կյանքեն...», իսկ երբ հասավ կենինի արձակին, ծունկի իջավ. «ոչ, — բացականչեց Աբովյանը, — հենց միայն այս մեծ մարդու արձանը տեսնելու համար չպետք է մեռնել...»

— Ու չմեռավ, — եղբակացնում էր շարադրության հեղինակը, — ես չեմ հավատար, որ նա մեռած լինի...»

Սիրաքը լոեց։ Շարադրությունն ավարտվել էր, իսկ դասարանում զսպված լուսիցուն աիրեց։ Բոլորը զարմանքով և ուրախ նայում էին իրենց նոր ընկերոջը, որ

օտարությունից վերադարձել էր ու առաջին անգամ դասի. էր նստել իրենց հետ։ Դեռ որքան բան ուներ սովորելու նա ...

— Սխալ է, — վերջին շարքից լսվեց մեկի ճայնը, — Սիրաքը շփոթվել է ...

— Շփոթվել է, շփոթվել է, — կրկնեցին այս ու այն կողմից,

Բայց հենց այդ ժամանակ ոտքի կանգնեց մի տղակ հուզված ձեռքը թափ տալով ասաց.

— Իսկ ես կասեմ, որ Սիրաքը ճիշտ է դրել։

Բոլորը դարձանքով շուռ եկան դեպի նա։ Ուսուցիչն էլ, որ սպասում էր, թե ինչով կվերջանա երեխաների վեճը, նայեց ոտքի կանգնած տղային։

— Եթե Լենինի արձանն այն ժամանակ կանգնած լիներ, — շարունակեց տղան, — Աբովյանը չէր անհայտանա ... Նա դուցե չմեռներ էլ մինչև հիմի, մենք նրան ծաղկեվունջ կտանեինք ... կհրավիրեինք մեր պիոներական ջոկատի հավաքին ...

— Ճիշտ է, ճիշտ է, — ուրախ բացականչեցին մի քանիսը և ծափ տվին։ — Բայց ավսոս, — շարունակեց աշակերտը, — որ այն ժամանակ Երևանում ոչ Ստալինյան պողոտա կար և ոչ էլ Լենինի արձան ..., և տխուր նստեց։

— Չեմ հասկընա, — շփոթված սկսեց Սիրաքը, — ինչպես կընար Երևանը առանց Լենինի արձանի և Ստալինյան պողոտայի ... ել ինչ Երևան, չեմ պատկերացներ ...

Հնկեր Ազատյանը մոտեցավ տղային, շոյեց նրա այտը և ձեռքով դասարանին լոելու շարժում անելով՝ խոսեց։

... Սիրաքը սուն էր դառնում առաջին դասից։ Այս
անդամ նա շուրջն էր նայում հպարտ մի զգացմունքով։
Նա արդեն շատ բան գիտեր ու մեծացել է մի ամբողջ
տարով։ Տուն կղնա և քրոջն ու եղբորը իր շուրջը հա-
վաքելով նրանց կողատմի Աբովյանի մասին, Երևանի
մասին, կասի նրանց, որ այս բոլոր գեղեցկությունները
նոր են ստեղծվել Լենինի ու Ստալինի հայացքի տակ,
հայրենիքի իսկական տերերի ձեռքով։ — ահա այս ար-
ձանը, այն կամարը, այս սիրուն շենքը, ծառերը, կա-
նաչը, հեռվում ծխացող գործարանները, ամենը, ամե-
նը ... Աբովյանը չի տեսել դրանք, նա չէր էլ կարող
տեսնել ու միայն երազում էր այս լավ օրերի մա-
սին... Իր երազի կը ակումն էլ այլպես... Իսկ ինքը՝ Սի-
րաքը, որ նոր է վերադարձել տերերի դաժան աշխար-
հից, քայլում է Աբովյանով ու մտածում է, թե ինչ ըս-
քանչելի երազ է եղել այդ... Ինչպես է ուզում շուտ
մեծանալ, սովորել ամեն ինչ, պիտանի քաղաքացի դառ-
նալ սիրելի հայրենիքի համար։

Այդ առաջին դասը նա երբեք չի մոռանա։



ՔԱԶ ՈՐՍՈՐԴԵ

Մի անգամ Սուրիկը ...

Բայց դուք երեխ չզիտեք, թե ով է այդ Սուրիկը։
Նա հայտնի է որպես նշանավոր որսորդ։ Հասակը չորս
իր քանոնի բարձրությունն ունի, իսկ ոտքերն այնքան
մեծ են, որ երկուսը հաղիվ տեղավորվում են հոր մի
ոտնամանի մեջ։ Ամեն անգամ, երբ Սուրիկը տեսնում է,
որ հեռվից գալիս է որսորդ քեռին, փայտի հրացանը
ու որսի ամուր պարանը ուսն է գցում ու վազում քե-
ռուն ընդառաջ։ Նոանից վերցնում է որսած մի քանի
քաղ ու կաքավ և հաղարտ-հաղարտ անցնում գյուղի փո-
ղոցներով։ Հասակակիցները նախանձով են նայում նը-
րան, իսկ գյուղացիները հիացմունքով ասում են.

— Այ, թե որսորդ է հա ...

— Թող մեծանա, տես՝ ինչ է բերելու գայլերի
գլխին։

— Կոլխոզի ոչխարի մազին դիպչող չի լինի։

Սուրիկը լսում է այս ամենը և հաղիվ զսպում է
իրեն, որ հաղարտությունից չգոռա։

Մի անգամ այս Սուրիկը ...

Բայց էլի շատ բան մնաց ասելու նրա մասին։ Այ-
օրինակ, թե ինչ է որսում նա, այդ նշանավոր որսորդը։
Սկզբում մի քանի ծիտ որսաց իրենց դեղի վրայից,
բայց դրա համար նրան չդովեցին, ընդհակառակը մի
անգամ ուսուցչուհին նրան մի լավ խրատ տվեց։

— Դու ինչու ես սպանում մեր բարեկամ թոշուն-ներին, — ասայ նա Սուրիկին:

Այդ օրվանից նա թողեց ծտորոց: Որոշեց նապաստակ ու աղվես որսալ՝ չէր հաջողվում: Ոչ մի նապաստակ կամ աղվես քնած չէր մնում իրենց դեղի տակ, որ Սուրիկը պարանը զցեր նրա վիզն ու բռներ:

Իսկական որսը նա անում էր դիշերը՝ երազում: Պատահում էր, որ նա գալլ էր սպանում. սպանած զայլը դցում է ուսին ու դալիս դեպի գյուղ: Բայց դա հոգյուղ չի, այլ մեծ, բարձր, սիրուն շենքերով քաղաք, ինչպես դասազրքի նկարում. փողոցը լիքն է մարդկանցով: Նրանք տեսնում են Սուրիկին գայլը շալակած և զարմանքից հաղիվ չեն ուշաթափում: Իսկ Սուրիկը անցնում է հալարտ, նրանց վրա չի էլ նայում:

Արի, տես, որ երբեմն մայրը խանգարում է նրան: Ահա օրինակ, նա բռնել է գայլի կոկորդից ու սեղմում է, ոնց է սեղմում. գայլի աչքերը դուրս են ընկնում, քիչ է մնում շունչը վիչի, և հենց այդ ժամանակ մայրը նրան ձայն է տալիս:

— Սուրիկ ջան, ախը դպրոցից ուշանո՞ւմ ես ...

Ահա թե ով է Սուրիկը:

Եվ մի անգամ այս Սուրիկը ...

Դարձյալ շտապեցի: Չասացի, որ մեր որսորդը ոչ միայն փայտե ձի, հրացան, որսը բռնելու համար երկար պարան ունի, այլև մի ճարպիկ շուն մի իսկական որսի շուն, մեջքը բարակ և խելացի, անունը Դոլիկ: Ուր գնա՞ շանը հետին է տանում:

Եվ ահա, թե ինչ պատահեց մի անգամ մեր նշանավոր որսորդ Սուրիկի հետ:

Գարուն էր՝ մայիսիան մի ուրախ օր: Սուրիկը

դուքս էր եկել զբոսանքի: Նա սիրում էր դասերից հետո
զնալ դիմացի կանաչ բլուրը: Այդ օրը շանը հետը չէր
վերցրել. բարկացել էր ու վրեժ էր հանում Դոլիկից,
որ առավոտը պահել էր իր կոշիկներից մեկը:

Բլուրի ստորոտին արտեր ու աըոտներ էին: Վերե-
վում թփուտներ կային, Սուրիկն ուղում էր անպայ-
ման թփուտներին հասնել: Որսորդ քեռուց լսել էր, որ
աղվեսներն ու գայլերը հենց թփուտների մեջ են իրենց
բույնը շինում, ձորերում ու քարայրներում: Նա չէր վա-
խենում դրանից: Նախ, որ օրը ցերեկ էր, և գլուղն էլ
այնքան հեռու չէր: Հետո, միթե որսորդը գայլից ու
աղվեսից կվախենա: Եվ նա չէր վախենում: Հետը վերց-
րել էր հրացանը, ձին և պարանը:

Արդեն մոտենում էր թփուտներին, երբ հեռվեց
նկատեց կոլխոզի ոչխարի հոտը: Ուրախացավ. երկար
ժամանակ է՝ չէր տեսել իրենց ոչխարները, չէր խաղա-
ցել նրանց հետ, վարվել չալպուտուրիկ այծերի վը-
զով:

Եվ սկսեց շտապել: Երբ հասավ հոտին, սկսեց վա-
թաթվել ոչխարների վզով ու խաղալ նրանց հետ, հետն
էլ ինքն իրեն խոսում էր:

— Վայ, Չալիկ ջան, դու հո ինձ կհիշես, որ նոր է իր
ծնվել, ես քեզ շատ եմ կերակրել կանաչ խոտով, չէ՞...

Երկար կխոսեր որսը մոռացած մեր որսորդը, եթե
հանկարծ դիմացի բլրի լանջում ոչխարների մի խումբ
չխրաներ: Սուրիկն զգաստացավ: Նա դիտեր, որ ոչխարը
ամենից շատ գայլից է վախենում: «Գայլ է ընկել հոտի
մեջ և կարող է վնաս հասցնել» մտածեց նա և շտապեց
խրտնած ոչխարի կողմը: Հովիվները հեռու էին և չէին
նկատում, թե ինչ է կատարվում այնտեղ:

Սուրիկն խեռայն պատրաստեց որսի պարանը և շտապեց: Շատ էր զնացել, թե քիչ՝ ինքն էլ չիմացավ, որովհետեւ տարված էր միայն մի մտքով՝ անպայման բռնել գայլին ու քարշ տալ դեպի գյուղ: Մեկ էլ՝ ինչ տեսնի, ոչխարի մեջ է ընկել փոքրիկ գայլի ձագ, իսկը շան նման, ու սկսել է խաղալ, վախեցնել ոչխարներին: Սուրիկի սիրան ամրագնդվեց ինչպես երազում. «Էս փոքրիկից պիտի վախենամ», մտածեց նա և պարանը պատրաստ շտապեց գայլի կողմը: Բայց դայլը նրան բանի տեղ էլ չդրեց: Խարս տալու համար շան նման երկու անգամ հաչեց, նույնիսկ փորձեց կատակ անել Սուրիկի հետ, բայց դա խաբվող պտուղը չէր:

— Էղ մւմ ոչխարին ես ուղում վնաս հասցնել,— գոռաց նա ու պարանը զցեց: Օղակը վրիալեց, իսկ դայլուկը երեխ էլի բանի տեղ չդնելով որսորդին՝ սկսեց խաղալ պարանի հետ: Դա շատ բարկացրեց Սուրիկին: Նա երկրորդ անգամ զցեց պարանը, և այս անգամ օղակն ընկավ. դայլի պարանոցը, պինդ ըռնեց: Ամբողջ ուժով Սուրիկը ձգում էր պարանը, վախից, թե՞ ուրախությունից՝ բարձր գոռում:

— Հասեք, դայլ եմ բռնել, հեյ ...

Գայլը նկատելով, որ որսորդն իր հետ հանաք էի անում ու շատ անախորժ խաղեր է սարքում, փորձեց վախչել. օղակը պինդ կպավ նրա կոկորդին, բայց նա հեշտությամբ անձնատուր չէր լինում, սկսեց ձգել: Սուրիկը ձգում էր, դայլը ձգում էր: Սուրիկը օգնություն էր գոռում, դայլը ոռնում էր շան նման, կաղկանձում: Փըստուրը տվել էր բերանը: «Էս է՝ կխեղդվես, կխեղդվես», — գոռում էր մեր քաջ որսորդը հեասպառ:

Հենց այդ ժամանակ հեռվից մի դյուղացի բարձր գոռալով վազում էր դեպի Սուրիկը: Տղան շատ ուրախա-

ցավ. «օդնության է գալիս, բայց մինչև նա հասնի, ես սրա բանը կպրծացնեմ», — մտածում էր նա և ավելի ձըգում պարանը. վերջապես որսը շնչառապառ վայր ընկավ։ Քաջ որսորդը կարմրատակած կանգնեց նրա մոտ, իսկ գյուղացին գոռում էր։

— Այ տղա, էղ ով ես հեյ, ի՞նչ ունես մեր շան հետ, հեյ, ի՞նչ մնաս ա տվել քեզ։

Շուն։ Կարծես սառը ջուր լցրին որսորդի գլխին։ Նա աչքերը լայն բաց արած կռացավ որսի վրա ու սկսեց պարանը թուլացնել։

Իսկապես որ շուն։

Չորս կողմից հափաքվեցին հովիվները և ծիծաղում էին, իսկ որսորդը տխուր մտածում էր.

— Այ թե խաբվեցի՞ ։ Իսկ եթե Դուլիկը ինձ հետ լիներ, անպայման կճանաչեր։

Ահա թե ով էր որսորդ Սուրեկը։



Ց Ա. Ն Կ

b2

| | |
|-----------------------|----|
| Հմ առավոտը | 3 |
| Խարույկի մստ | 9 |
| Նկարը | 31 |
| Վեճ | 36 |
| Սեպակմբերի 1-ին | 41 |
| Մի ծառի պատմություն | 45 |
| Վաղվահերթը | 53 |
| Կատակ | 57 |
| Դերասանի աղան | 59 |
| Աշխարհագրության դասին | 64 |
| Օղալարիկը | 70 |
| Մրցողները | 73 |
| Օղակավարը | 78 |
| Առաջին դասը | 81 |
| Քաջ որորողը | 86 |

Պատուի իմրադիր՝ պահապահներ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Կոնսուլ սրբագրիչ Մ. ԲԱԲԱՅԱՆ

Վ. 04882: Պատուի 1317: Տիրաժ 2000: Հեղինակացին Յ., տպագր. 5³/4 մամ.5
Հանձնված է արտադրության 8/XI—1949 թ.
Ստորագրված է տպագրության 20/XI—1949 թ.

Հայութիղը բարձրացրած է 1 տպարան, Խնինի փ. № 65, Երևան, 1949

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.
220030503



ԳԻՒԾ 2 Ա.

[204]

30503